

ԻՐԱՔԻ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԶՈՂԵՐ ՏԱԼ



Պաղտատի մէջ ամերիկացի զինուոր մը՝ 25 Դեկտեմբերի գիշերը

ՊԱՂՏԱՏ, 26 (ԱՅՓ).- Անցնող երկու օրերուն, ամերիկացի ութ զինուորներ սպաննուեցան Իրաքի մէջ: Ութերորդ զինուորը սպաննուեցան Ուրբաթ առտու, երբ կը փորձէր չեղոքացնել ակնային Պաքուպայի մաս: Անկէ առաջ, Պաքուպա - Սամարա ճամբուն վրայ սպաննուած էր այլ զինուոր մը, երբ զինուորական «կարաւան» մը հրթիռներու յարձակումի ենթարկուեցաւ: Նոյն միջադէպին վիրաւորուեցան երկու զինուորիկներ: Ըստ ամերիկեան աղբիւրի մը, զինուորները հակադարձաբար են Իրաքի

պէն քանի մը ժամ առաջ, Պաղտատի մէջ տեղի ունեցած պայթումի մը պատճառով սպաննուած էին ամերիկացի երեք զինուորներ: Մայիս 15-ի վեր, 209 ամերիկացի զինուորներ սպաննուած են Իրաքի մէջ եւ քանի մը հարիւր ուրիշներ վիրաւորուած:

Նկատուած երկու երրորդի մեծամասնութիւնը պատճառով Տուսայի մէջ, իրրեւ արդիւնք անկախ երեսփոխաններու դաշնակցութեան, յայտնեց կուսակցութեան մէկ պաշտօնատարը Ուրբաթ օրը:

Վլատիմիր Փեխին ըսաւ, որ անկախներու դաշնակցութիւնը պահանջովէն ետք, Միացեալ Ռուսիա 308 աթոռ կ'ունենայ Տուսայի մէջ: Յիշեալ թիւը կարեւոր կը նկատուի, որովհետեւ այս ձեւով Փուլիսի կուսակցութիւնը կարելի չէ նկատուի, որ իր կարգին Փուլիսի երրորդ վերընտրութիւնը կրնայ արտօնել:

ԿՈՒՋՈՒԻ

● Ըամակարգիչի վրայ autocad գիտցող փորձառու երիտասարդ մը: C/VG ուղարկել հետեւեալ faxին. 04 712301:

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

● Պուրճ Ըամուտի մէջ, հեռ.՝ 04 414612 երեկոյեան ժամը 6:00էն ետք:

ԲԱՆՏԱՒՈՐՈՒՄԸ

Տըր եւ տիկին Գեորգ եւ Անժելա Ասատուրեան բախտաւորուած են առջինն զաւակով մը՝

ԱՐՏԱԿ

11 Դեկտեմբեր 2003 Պէյրուք

ԲԱՆՏԱՒՈՐՈՒՄԸ

Տըր եւ տիկին Երան եւ Թալար Աննայեան բախտաւորուած են առջինն զաւակով մը՝

ՍԵՐԼԻ

26 Դեկտեմբեր 2003 Պէյրուք

ՍՈՒՐԲ ԵՎ ՍՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՈՑ ՎԵՐԱՆՈՐՈՂՄԱՆ ՖՈՆՏ

Տըր եւ տիկին Սարգիս Տեմիրճեան 1000\$
 Տըր եւ տիկին Աւետիս Տեմիրճեան 1000\$
 Տըր եւ տիկին Կարպիս Նազարեան 200\$

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարի Աշգարեան
 Տէր եւ տիկին Ռաֆֆի եւ Սոնա Յնձայեան եւ զաւակունք
 Տէր եւ տիկին Ռուբէն եւ Շուշան Աշգարեան եւ զաւակունք
 Տէր եւ տիկին Կարպիս եւ Անահիտ Գոլանճեան եւ զաւակունք
 Տէր եւ տիկին Հրայր եւ Սթեֆանի Աշգարեան եւ զաւակունք
 Տէր եւ տիկին Ռաֆֆի եւ Փալա Աշգարեան եւ զաւակունք
 եւ Նաման ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝

ՅԱԿՈՒ ԱՇԳԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ Ըստապ՝ 1907ին)

Մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 10 Դեկտեմբեր 2003ին, Լոս Անճելըսի մէջ:

Թաղման պաշտամունքը պիտի կատարուի երկուշաբթի, 29 Դեկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:30ին, Այնճարի Հայ Աւետարանական եկեղեցոյ մէջ, ուր կ'է հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Այնճարի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իրրեւ մահագոյ:
 ● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Ընդունիլ օրը, եկեղեցոյ սրահին մէջ:
 ● Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել Այնճարի Հայ Աւետարանական երկրորդ վարժարանին:

ԲԱՐԻԿ ԶԱԲԱՄԵՃԵԱՆ ընդ ՍԵՆԱՆԻ ԽՈՐՈՂԵԱՆ ՆՇԱՆՈՒՄԸ

24 Դեկտեմբեր 2003

ԾԱԽՈՒ ԸՈՂ

Այնճարի մէջ: Ըեռ. 01-262599:

ԿՈՒՋՈՒԻ

«Ըր քոնտիլըն» ի ներկայացուցչութիւնը վայելող ընկերութիւն մը (Արեւմտեան Պէյրուք), կարիք ունի փորձառու թեքնիկներու, անցընողներու եւ նորոգողներու:

Նաեւ կ'ուզուի համակարգիչ գիտցող հաշուապահուի մը, ժամը 2:00 - 5:00 ամէն օր:

Կ'ուզուի ինքնաշարժի վարիչ մը, 30 - 40 տարեկան:

Ըեռ. 01 - 372702 - 03 - 800601:

ՊԵՆԻՆԻ ՄԷՋ ՕԳԱՆԱԲԻ ԱՐԿԱԾԻ ՄԸ ԶՈՏ ԳԱՅԻՆ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

իրապարկեց լիբանանցի կոնկրետ անուանացանկը, որուն մէջ է Մարիա Փանուքեանի անունը:

Պենինի մէջ բանակը երէկ արդէն իսկ սկսաւ օդանաւին արկածին պատճառներուն հետաքննութեան:

Փրկուած լիբանանցիները թիով 22 հոգի են, որոնց մէջ են Իսպայէլ, Ժաք եւ Ռաֆֆի Փանուքեաններ:

Քոթոնուի մէջ օդանաւորութեան պատասխանատուներ յայտնեցին, որ օդանաւին անհիւնէրը ճշգրիտ ձեւով վեր չէր բարձրացած եւ այդ պատճառով օդանաւը բախած է օդակայանի շէնքերէն մէկուն, ապա շախախտուած:

«Եւր. Թի. Էյ.» օդանաւային ընկերութեան սեփականատէր Տարուիշ Խապէս, որ նաեւ կը գտնուէր շախախտուած օդանաւին մէջ եւ փրկուած էր, շեշտեց, որ օդանաւը յաւելեալ բեռ չէր կրէր:

Աւելի ուշ ֆրանսական լրատու գործակալութեան տեղեկութիւններուն համաձայն յայտնուեցաւ, որ շախախտուած օդանաւին երկու սեւ տուփերը գտնուած են եւ անոնք կը դիրքացնեն արկածին պատճառը յայտնաբերելու հետաքննութիւնները:

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ խոր ցաւ յայտնեց կոնկրետի համար: Ան ցաւակցութիւն յայտնեց լիբանանցի բոլոր ընտանիքներուն եւ առողջութիւն մաղաքեց վիրաւորներուն:

Նախագահ Լահուտ ցաւակցական բազմաթիւ հեռագիրներ ստացաւ տարբեր երկիրներու ղեկավարներէն:

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի իր կարգին ցաւ յայտնեց Քոթոնուի մէջ տեղի ունեցած այս արկածին համար եւ մօտէն հետեւեցաւ դէպքին բոլոր վարզացումներուն:

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ հեռագրային հաղորդակցութիւն մը ունեցաւ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի հետ: Նախագահ Շիրաք շեշտեց, թէ ֆրանսական ռազմական օդանաւեր իրենց կարելի պիտի ընեն լիբանանցի կոնկրետի դիակները շուտ Լիբանան փոխադրելու համար:

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Երէկ յետմիջօրէին, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը մեկնեցաւ Ժապէլ ցաւակցութիւն յայտնելու համար արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտին, անոր հօրեղբոր մահուան առիթով:

Կեդրոնական Կոմիտէն ցաւակցական այցելութիւններ տուաւ նաեւ երեսփոխան Մոհամէտ Պըրժաուիի՝ անոր հօր մահուան համար, ինչպէս նաեւ նախկին նախարար, երեսփոխան Ալի Խալիլի՝ անոր քրոջ մահուան համար:

ՍԵՓԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՆԵՐՈՒ ՍԵՆՏԻՔԱՅԻ ԺՈՂՈՎ

Սեփական հիւանդանոցներու սենտրոնները յետմիջօրէին գումարեց ժողով մը, որուն ընթացքին պատրաստակամութիւն յայտնեց լուրջ եւ շինիչ երկխօսութիւն մը կատարելու Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մատուցիչ հետ, նկատի ունենալով, որ հիւանդանոցները ու պահովագրութեան սնտուկը Լիբանանի առողջապահական մարզի հիմնական տարրերն են:

Սենտրոն յայտնեց, որ սեփական հիւանդանոցները բոլոր հիւանդներուն պիտի մատուցեն հարկ եղած առողջապահական ծախսերը, որոնք սենտրոնի կողմէն խտրութեան ենթարկուած չեն:

Նշենք, որ սենտրոնի եւ ընկերային պահովագրութեան ազգային մատուցիչ երկխօսութեան բանակցութիւնները տեղի ունեցան Ալիսաուտրական Ընդհանուր Համադաշնակցութեան կեդրոնատեղիին մէջ, համադաշնակցութեան նախագահ Ղասսան Ղըբընի գլխավորութեամբ:

Հանդիպումին աւարտին որոշուեցաւ քննարկուելիք հարցերուն ցանկը, որոնց ուսումնասիրութիւնը պիտի կատարուի Բ՛է՝ հիւանդանոցներու սենտրոնի եւ Բ՛է՝ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մատուցիչի կողմէ:

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Պատիկ-Մատիկ»ը 19 Դեկտեմբերի թիւով կը յայտարարէր, որ իր ընթերցողներուն կը նուիրէ 2004 տարուան «Պատիկ-Մատիկ»ի օրացոյցը: Հայկական վարժարաններէ խմբագրութեան ուղղուած յաւելեալ մեծաքանակ թիւերու պահանջը պատճառ դարձաւ, որ օրացոյցները կարենանք բաժնել միայն աշակերտութեան:

Տպագրանակի յաւելեալ պահանջովով «Ազգակ»ի այսօրուան թիւին հետ մեր ընթերցողները կը ստանան 2004ի օրացոյցը:

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

● Նոր Տարուան առիթով, Տիար Սելըն Կիրճեան 100\$
 Տիար Յարութիւն Զիրճեան 100\$

ՄԱՀԱԶԴ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հ. Յ. Դ. Արեւելեան շրջանի Կեդրոնական Կոմիտէն խոր վիշտով կը գումար իր շրջանի հաւատարմ ընկերներէն:

ՎԱՅԷ ՄԱՐՈՒԽԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ պատահեցաւ 23 Դեկտեմբեր 2003ին, Պոսթընի մէջ, դաժան հիւանդութեան դեմ պայքարելէ ետք:

ՄԱՀԱԶԴ

Պոսթընի Հ. Յ. Դ. Կոմիտէն խոր ցաւով կը գումար իր հաւատարմ ընկերներէն՝

ՎԱՅԷ ՄԱՐՈՒԽԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ պատահեցաւ 23 Դեկտեմբեր 2003ին, Պոսթընի մէջ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Լիլիան Մարուխեան եւ զաւակները՝ Շանթ, Սանան եւ Մարին

Տիկին Անահիտ Մարուխեան
 Տէր եւ տիկին Գրիգոր եւ Ալեան իր զննեան եւ զաւակները՝ Ռազմիկ եւ Նանօր

Տիար Դերենիկ Մարուխեան
 Տիկին Շարիկ Մարուխեան եւ զաւակը՝ Անահիտ
 Տէր եւ տիկին Պերթ եւ Ալիս Մարուխեան
 Տիար Արթուր Սահրիկեան
 Մարուխեան ընտանիք
 Տէր Մարգրիտեան ընտանիք
 Նախատուրեան ընտանիք
 Սահրիկեան ընտանիք
 Էրզնեան ընտանիք
 եւ Նաման ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, զաւակին, եղբոր, փեսային, զարմիկին եւ հարազատին՝

ՎԱՅԷ ՄԱՐՈՒԽԵԱՆԻ (Ծնեալ՝ 1963ին)

մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 23 Դեկտեմբեր 2003ին, Պոսթընի մէջ:

Յուշակուցութեան արարողութիւնը պիտի կատարուի երկուշաբթի, 29 Դեկտեմբեր, Պոսթընի մէջ:

● Ներկայս ընդունիլ իրրեւ մահագոյ:

«ՊՁՏԻԿ - ՄՁՏԻԿ»Ի ԺԱՊԱԲԵՆԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

«ՄԻՍԻՉ ՍԱՆԹԱ ՔԼՈՉ»

Տեղի կ'ունենայ Կիրակի, 4 Յունուար 2004ին, առաւօտեան ժամը 11:30ին, «Յակոբ Տըր Սելընեան» թատերասրահին մէջ:

● Տոմսերը ստանալ Ըամագայիցի գրախանութեան, «Ազգակ»ի խմբագրատունէն եւ ցուցադրութեան օրը սրահին մուտքէն:

ՆՈՐ ՏԱՐՈՒՄՆ ԳԻՇԵՐԸ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԵԱՍԻ ՄԷՋ

Նոր Տարուան առաջին ժամերուն, Չորեքշաբթի, 31 Դեկտեմբեր 2003ի կէս գիշերին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի մատուցուի Սուրբ եւ անմահ պատարագ: Պատարագին պիտի նախագահէ վեհափառ հայրապետը՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կոչ կ'ուղղուէ մեր հաւատացեալներուն, որ Նոր Տարուան աւանդական ուրախութենէն ետք ներկայ գտնուին Սուրբ պատարագին եւ աղօթքով ու փառաբանութեամբ դիմաւորեն բացուող Նոր Տարին:

Վեհափառ հայրապետը Նոր Տարուան շնորհաւորութիւնները պիտի ընդունի վեհարանի դահլիճի մէջ, պատարագէն անմիջապէս ետք, ինչպէս նաեւ Յունուար 1ի առաւօտեան ժամը 10:00էն 13:00:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Ա.ԶԱՍԱՄԱՐՏ Ա.ԿՈՒՄԲ Ա.ԶԱՍԱՄԱՐՏ Ա.ԿՈՒՄԲ

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կերգ

ԸՐԱՉ ԿԱՅԾԱԿԵԱՆ

Ընկերակցութեամբ ՍԵՂՈ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 27 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00էն սկսեալ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ, Էշրեֆի:

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել 01-449924 թիւին: Սակ՝ 20 տողար

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՍԱՆ ՈՐԴԵԳՐԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԻՆ ԱՌԻԹՈՎ

Լիբանանի տնտեսական ծանօթ տագնապին պատճառով նիւթական լուրջ դժուարութիւններու դէմ յանդիման ինքզինք գտած լիբանանահայ չքաւոր ընտանիքներու պարզած վիճակը չէր կրնար վրիպիլ Ազգային Իշխանութեան ուշադրութենէն: Եւրոյ շնորհ տարի առաջ, Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդը գործի լծուեցաւ այս պայմաններուն մէջ՝ մեր կրթական կառոյցին սպառնացող մարտահրաւերներուն արմատական լուծում բերելու հաստատ որոշումով: Ազգային վարժարաններու մանկավարժական-կրթական մակարդակի արդիականացումը հետապնդող այլաբնոյթ աշխատանքներուն կողքին (կրթական ծրագիրներու վերանայում, մանկավարժացի նոր ծրագրի յստակացում, սեմինարներու կազմակերպում, թուրքալեզուութեան և հայերէնի դասագիրքի շարքի հրատարակում, այլ դասագիրքերու պատրաստութեան ձեռնարկում), Ուսումնական Խորհուրդը, թեմիս բարեջան առաջնորդ Տ. Գեղամ եպ. Խաչերեանի գլխաւորութեամբ՝ նախաձեռնեց շարք մը հաստիքաբեր ձեռնարկներու եւ կրթական ֆոնտերու ստեղծում:

Ազգային Առաջնորդարանի կրթական նախաձեռնութիւնները համասփիւղեքան տարողութիւն ու բովանդակութիւն ստացան Յունիս 2003ին, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս՝ տէր կանգնելով Լիբանանի Ազգային վարժարաններու նիւթական տագնապը լուծելու նպատակով Ազգային Իշխանութեան ի գործ դրած ճիգերուն, կոչ ուղղեց այդ օրերուն գումարուող Ազգային Ընդհանուր Ժողովին՝ պահանջելով յատուկ ուշադրութեամբ քննել Լիբանանի Ազգային վարժարաններուն պարզագույն եւ առնել գործնական քայլեր: Ժողովը ընդառաջեց Արամ Ա. կաթողիկոսին առաջարկին, հարցը ենթարկեց համապարփակ քննարկման, որուն եզրակացութիւնը վեհափառ հայրապետը ամփոփեց Մեծի Տանն Կիլիկիոյ բոլոր թեմերու առաջնորդներուն եւ ազգային իշխանութիւններուն յղուած կոչի մը մէջ՝ թելադրելով կարելիութեան սահմաններուն մէջ նիւթապէս օգտակար հանդիսանալ Լիբանանի Ազգային վարժարաններուն՝ անոնց նիւթական ծանր բեռը թեթեւցնելու եւ Ազգային վարժարաններու դէպի պայծառ ապագայ երթին գործնապէս սատար հանդիսանալու նախաձեռնութեամբ:

Իր կարգին, Լիբանանի Ազգային Իշխանութեան Ուսումնական Խորհուրդը իր ծրագիրները շարունակեց հետապնդել յաւելեալ վճռակաւութեամբ, որուն արդիւնք մշակուեցան մանկավարժական եւ հաստիքաբեր նաեւ այլ ծրագիրներ, որոնք եկան ամբողջացնելու մինչ այդ իրականացած ապօգուտ նախաձեռնութիւնները: Այս նախաձեռնութիւններուն գլխաւորը հանդիսացաւ Ազգային առաջնորդարանի յայտարարած «Սան որդեգրելու ծրագիր»ը: Պատերապմի տարիներուն, ի գին ամէն տեսակի զոհողութեան, իր բոլոր կառոյցներուն մէջէն հայ դպրոցը կանգուն պահելու նպատակով ոչինչ խնայած Ազգային առաջնորդարանը, այսպիսով, շա-

րունակեց իր կրթանուէր գործունէութիւնը: «Սան որդեգրելու ծրագիր»ը տուաւ իր շուրջը լի արդիւնքը եւ շնորհիւ մեր ժողովուրդի ազնիւ պատկերներուն ողջունելի գիտակցութեան՝ շուրջ 200 աշակերտներ շարունակեցին դպրոց յաճախել՝ փոքր տարիքէն գործի ասպարէզ նետուելու փոխարէն:

Դէպի պայծառ ապագայ մեր հաւաքական երթը սկսաւ ընթանալ ա՛լ աւելի հաստատաբայլ: Եւ որովհետեւ յաջող սկիզբը կը պահանջէ նուաճումը ամբողջական յաջողութեան, որոշեցինք յաւելեալ թափ տալ այս ապօգուտ ծրագրին՝ հասնելու համար մեր վերջնական նպատակակէտին՝ Ազգային վարժարաններու նիւթական, կրթական եւ մանկավարժական ամբողջական վերականգնումին:

Մենք կը հաւատանք եւ փորձառութիւնը արդէն սորվեցուց մեզի, որ ներկայ կացութենէն դուրս գալու ամէնէն գործնական միջոցառումներէն մէկը «Սան որդեգրելու ծրագիր»ն է: Այսպիսով՝ շնորհիւ տարեկան 250 անդիկեան տույր յատկացումին՝ հայ չքաւոր աշակերտ մը կը շարունակէ դպրոց յաճախել, զինուիլ Հայկ Նահապետի եւ Մեսրոպ Մաշտոցի հաւատքով, ոգի ու նկարագիր կազմել կարմիր վարդանի եւ Ներսէս Ենտրիակիի աւանդով ու պատգամով եւ լիբանանահայ յանձնառու երիտասարդութեան շարքերը հարստացնել աւանդապահ նոր նւիրեալով մը:

Հետեւաբար, Ամանորի եւ Ս. Ծնունդի այս բազմախորհուրդ նախօրեակին, նուազագոյնը 250 տույր նւիրելով՝ դուք մեր գործօն մասնակցութիւնը բերած կ'ըլլաք հայ դպրոցի հիմերը վերանրապնդելու մեր հաւաքական ճիգին: Այս իսկ պատճառով, նիւթական ակնկալութեան չափ եւ նոյնիսկ նիւթականէն աւելի մեծապէս գնահատելի է իւրաքանչիւր սան որդեգրողին ընդմէջէն յայտնուող մեծահոգի եւ իր արմատներուն հաւատարիմ բարերար հովանաւորի մը պայծառ ներկայութիւնը, որուն բարոյական նեցուկը պարզապէս ապագայ մը կ'արժէ եւ արդարօրէն յոյս ու հաւատք կը ներշնչէ:

Արդարեւ, շեշտը ճիշդ տարին վրայ կը դնէ թեմիս բարեջան առաջնորդ Տ. Գեղամ եպ. Խաչերեան, երբ բարերարներուն ուղղուած իր ամանորեայ նամակին մէջ կ'ընդգծէ. «Իւրաքանչիւր սան որդեգրող, փաստօրէն, հայ մանուկ մը ուրախ կը պահէ, կարիքաւոր հայ ծնողքին յատուկելու շունչ կու տայ եւ հայ դպրոցին դուռը բաց կը պահէ»:

Այս գիտակցութեամբ՝ հայ աշակերտին եւ անոր ծնողքին, հայ դպրոցին եւ վայն վառ պահող հայ ուսուցիչին, Ազգային Իշխանութեան եւ Ուսումնական Խորհուրդին անունով՝ 2003 տարուան մեր բարերարներուն նիւթական, բայց մա՛նաւանդ բարոյական օժանդակութեան համար մեր գնահատանքը արձանագրելէ ետք, կ'ուզենք մեր կանխաւայտ շնորհակալութիւնները յայտնել նաեւ բոլոր անոնց, որոնց նիւթական աշակցութեամբ այս բարի գործը պիտի շարունակուի, ուռճանայ եւ հասնի իր լրումին՝ բարիք ու հրճուանք ներշնչելով մեր նիւթական նեցուկին կարօտ հայ աշակերտին:

Եկէ՛ք եւ մեր անսակարկ օժանդակութեամբ յաւելեալ հաւատք ու յոյս ներշնչենք մեր 250 տույր աշակցութեան սպասող հայ աշակերտին ու անոր ծնողքին, յոյս ու ժպիտ նւիրենք անոնց պայծառ աչքերուն, որպէսզի ապագան դիմաւորենք ա՛լ աւելի ինքնավստահ, լուսափայլ եւ ժպտուն աչքերով:

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003ին, Ս. Ստեփանոս Նախատարակազի եւ Սարկաւազց Տօնին առիթով, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ: Եկեղեցական արարողութեան պիտի հանդիսակցեն՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Պիտի պատարագ եւ քարոզ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
(Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց)

Սկիզբ ժամերգութեան	ժամը 8:00
Ս. Պատարագ	ժամը 10:00
Քարոզ	ժամը 11:00
Ձեռնարկ	ժամը 11:45

Պատարագէն ետք, վեհարանի դահլիճին մէջ տեղի պիտի ունենայ տօնին նուիրուած յատուկ ձեռնարկ, մասնակցութեամբ Դպրեվանքի սարկաւազց դասուն, որուն աւարտին վեհափառ հայրապետը իր պատգամը պիտի ուղղէ ուսանողներուն եւ հաւատացեալ ժողովուրդին: Սիրով կը հրաւիրուի հաւատացեալները ներկայ գտնուելու եկեղեցական արարողութեանց եւ դասարանական - գեղարուեստական ելոյթին, ներշնչուելու Ս. Ստեփանոսի ցահատակութեան խորհուրդով:

ԴԻՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Շ. Յ. Դ. ԼԵՄ

ՊՐԷՕՎԵԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՉՐ ՆԻՇ ԱՊԱՀՈՎԱԾ ՀԱՅ ԱՇԿԵՐՏՆԵՐՈՒ ՄՐՅԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԻՒՆ



Հ. Յ. Դ. ԼԵՄԻ Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ, երէկ, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Աերծ թովմասեան» սրահին մէջ տեղի ունեցաւ պրէօվէի պետական քննութեանց բարձր նիշեր ապահոված հայկական վարժարան յաճախող աշակերտներու մրցանակաբաշխութիւնը:

Ձեռնարկին բացման խօսքը արտասա-

նեց Նանոր Ղազարոնական Վարչութեան կազմակերպութեամբ, երէկ, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Աերծ թովմասեան» սրահին մէջ տեղի ունեցաւ պրէօվէի պետական քննութեանց բարձր նիշեր ապահոված հայկական վարժարան յաճախող աշակերտներու մրցանակաբաշխութիւնը:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Նանոր Ղազարոնական Վարչութեան կազմակերպութեամբ, երէկ, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Աերծ թովմասեան» սրահին մէջ տեղի ունեցաւ պրէօվէի պետական քննութեանց բարձր նիշեր ապահոված հայկական վարժարան յաճախող աշակերտներու մրցանակաբաշխութիւնը:

Մեկնաբանեց Նանոր Ղազարոնական Վարչութեան կազմակերպութեամբ, երէկ, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Աերծ թովմասեան» սրահին մէջ տեղի ունեցաւ պրէօվէի պետական քննութեանց բարձր նիշեր ապահոված հայկական վարժարան յաճախող աշակերտներու մրցանակաբաշխութիւնը:

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ՎԱՂՈՒՄՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում արարեալէն
8:45 «Աստղեր»
9:40 «Օրուան տոմար»
10:05 «Հոգեւոր խոհեր». Մաշտոց վրդ. Չօպանեան ուղղակի ձայնարկփռումով կը ներկայացնէ շաբթուան մտածումը եւ կը պատասխանէ ունկրան դիրներուն հարցումներուն
11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում հայերէն
1:30 Հայաստանեան լուրեր
3:00 «Ծաղկաստան». մանկապատանեկան յայտագիր՝ ուղղակի ձայնարկփռումով
6:50 «Օրուան տոմար» (կրկնութիւն)

LOԽԻ
«ՄԵՂՐԻ» ՄԱՍՆԱԳԻՂ
ԿԱՂԱՆԴԻ ՊԱՋԱՐ
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 27 Դեկտեմբեր 2003ին, առաւօտեան ժամը 10:30ին, Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի մասնաճիւղի ակումբին մէջ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Անհուն ուրախութեամբ կու գանք տեղեկացնելու մեր ժողովուրդին, որ Տնտեսական Ծրագրի խորհուրդը, Ազգ. վարժարաններու բարգաւաճման ի խնդիր տարուող ճիգերուն իր գործօն մասնակցութիւնը բերելու համար, 2004 տարեշրջանի Fuel Card իր հաստիքը պիտի տրամադրէ Ազգային վարժարաններուն:
Ծնորհակալութիւն՝ Տնտեսական Ծրագրի խորհուրդին:
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ԷՕԺԵՆԻ ԱՊԱՃԵԱՆ-ՍԱՆՏԻԿԻ մահուան քառասունցից առիթով, հոգեհանգրձան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:
ԹՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՍԻ ԸՆԹԵՐՅՈՒՄ
Մեծի Տանն Կիլիկիոյ հայրապետ՝
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
2004 տարին հռչակած է հայ ընտանիքի տարի: Այս առիթով, թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ եպ. Խաչերեանի տնօրինումով, Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003ին, Լիբանանի թեմի բոլոր եկեղեցիներէն մերս յընթացս Ս. Պատարագի հանդիսաւորապէս պիտի ընթերցուի վեհափառ հոր յատուկ պատգամը:
Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդը ներկայ ըլլալու Ս. պատարագին եւ ունկնդրելու վեհափառ հոր հայրապետական պատգամը մեր ժողովուրդի խորհուրդը հանդիսաւորապէս պատգամը մեր առողջ պահպանման ի խնդիր:
ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ո՞ՒՐ ԵՆ ՏՆԵՑԻՆԵՐԸ...

Փառք Աստուծոյ՝ բարձունքներուն վրայ,
եւ խաղաղութիւն երկրի՝
բոլոր բարեացական մարդերուն
(ՂԿ. Բ. 14)

Դարձեալ Մոնթել Է, ու Մոնթել երկու հազար երեք
անգամ:

Արդեօ՞ք մարդիկ պիտի գան ծունկի՝ աղքատիկ
մտերին առջեւ խոնարհուելու:

Արդեօ՞ք ժողովուրդներու առօրեայ կեանքին մէջ
հրահրուող հրատապ հարցերը՝ ընկերային, ընտանեկան
ու քաղաքային, պիտի գտնեն լուծում:

Արդեօ՞ք մեր երկրագունդին վրայ քիչ մը ամէն տեղ
գտնուող պատերազմները պիտի դադրին ու ուժմբե-
րու ձայները պիտի լռեն ու քարանձաւ:

Մտերին առջեւ կը տեսնեմ հրեշտակները, ու կը
տեսնեմ այնպէս՝ ինչպէս առաջին օրը Մոնթելին, Բեթ-
ղեհէմ: Անոնք չեն դադարած իրենց ստեղծումի առաջին
րոպէէն մինչեւ օրս՝ փառաբանելու իրենց Արարիչը ու
Զինքը ճանչնալու իբր գերագոյն Տէր:

Ահա իրենց շուրթերէն կը լսեմ ներքողի երգը -
Փառք Աստուծոյ՝ բարձունքներու վրայ, խաղաղութիւն
երկրի՝ բարեացական մարդերու:

Չէ որ այդ Մանկան Մոնթելը ուրիշ բան չէ, եթէ ոչ
յայտնութիւնը ճշմարիտ սիրոյ, ճշմարիտ եղբայրու-
թեան ու ճշմարիտ հաշտութեան:

Մտերին առջեւ կը նշմարեմ մարդիկ պարզ ու հա-
մեստ, որոնք ընթացք տուեր են աստուածային կոչին:
Արդէն, Աստուած շնորհք տուած է միշտ խոնարհնե-
րուն ու մերթա՞հապարտները:

Շնորհքը բարի լուրին, որ աշխարհը պիտի յեղաշը-
ջէր ու աշխարհը պիտի լուսաւորէր, նախ տրուեր էր
բարի հովիւներուն:

Այդ բարի հովիւները եղան առաջինները փութալու,
տեսնելու, ճանչնալու ու երկրպագելու իրենց Արարի-
չին, որ Աստուած էր Մանկան մը կերպարանքին տակ,
ախտու մը մտերին մէջ, յարգի վրայ ներհոգ, անասուն-
ներու տաք շունչով՝ տաքացած:

Երեւոյթը այդ մանուկին՝ թէ կը չէր ներշնչեր դադա-
փարը Աստուծոյ, բայց որովհետեւ հովիւները բարի
էին, հաւատք ունէին, եկան ծունկի եւ երկրպագեցին:
Մտերին առջեւ նաեւ կը նկատեմ ներկայութիւնը
մեծ անձնաւորութիւններու:

Այո՛, մեծ անձնաւորութիւններու, բայց ո՞չ տնեցի,
ոչ ալ երկրացի:

Անոնք օտար աշխարհամասերու մեծերէն էին: Հե-
ռուոր երկիրներէ թողած տուն-տեղ, պալատ ու գահ,
սիրով յանձն առած էին երկար ու տաղտկալի ճամբոր-
դութիւն՝ ձմարան ցուրտին, իբրեւ ուխտաւոր՝ փնտռե-
լու, գտնելու ճշմարտութիւնը եւ տեսնելու յոյսը:

Անոնք արեւելքէն եկած մողդէ էին, թագաւորներ
էին: Եկած էին ո՞չ միայն երկրպագելու ու խոնարհնե-
լու, այլ եւ նուիրելու խոնկ, գմբուխ ու ոսկի:

Ո՛ր են տնեցիները, երկրացիները ու պաղեստինցի
ժողովուրդը: Ո՛ր են փարիսեցիները: Ո՛ր են Սինա-
կովի իշխանները ու ռաբբուները: Ո՛ր է մանաւանդ
Հերովդէսը: Այդ օրերուն այդ բոլորը նախանձով ու
կրքով լեցուած էին, ու առիթը կը փնտռէին այդ աստ-
ւածային Մանուկը մէջտեղէն վերցնելու եւ սպաննելու:

Այսօր ալ ոչինչ փոխուած կայ: Նոյն չար մարդը եւ
չար ոգին կը տիրեն ու կ'իշխեն ամէնուրեք:

Երէկի չար մարդը ու չար ոգին, այսօրուան անաստ-
ւածն է, անհաւատն ու նախարբերը, որոնք միշտ պատ-
րաստ ու կազմ են այդ աստուածային Մանուկը խեղ-
դելու եւ սպաննելու:

Երէկի չար մարդը ու չար ոգին, այսօրուան պետական
մեծ քաղաքագէտներն են, որոնք իրենց խորհրդարան-
ներէն արտաքսած են Աստուած:

Անոնց համար որովհետեւ միակ անհրաժեշտը, կա-
րելուն ու կենսականը՝ է ու կը մնայ իրենց անձին հմայ-
քը, իշխանութիւնն ու դրամը: Խտացուած բառով մը՝

իրենց փառամոլութիւնը:

Մի՛ փնտռէք անոնց մօտ արդարութիւն եւ իրաւունք:
Այդ բառերը իրենց համար լոկ օրէնքներ են թափածոյ,
չըսելու համար հինցած ու մաշած բառեր: Այսօր,
միակ բանը, որ կը խօսի ու կ'իշխէ ու կը կառավարէ
Հին Կտակարանի՝ ՀՈՐԹՆ Է ՈՍԿԻ:

Դրամ, դրամ ու դարձեալ դրամ, այս է իրենց մտա-
սեւեռումը, հազիւ պատիկ խորշ մը մնացեր է իրենց
սրտին մէջ՝ Աստուծոյ համար:

Ամէն տեղ նահանջ, ամէն տեղ լծացում ու ամէն տեղ
փտութիւն:

Այս երրորդ հազարամեայ դարը՝ կոչուած է դար
աթոմական, դար գիտութեան, դար լոյսի, համակար-
գիչի, ինթըրնէթի ու Ի-մէյլի, որ մարդիկ կրնան մէկ
կոճակով աշխարհի բոլոր գեղեցկութիւնները, գիտե-
լիքները տեսնել ու խօսիլ, նոյնպէս բոլոր յոռի ու չար
բաները:

Դժբախտաբար գիտութիւնն ու յառաջդիմութիւնը
մարդկութեան երջանկութիւն չըբերին, այլ մարդկու-
թիւնը փճացուցին, քանդեցին ու կործանեցին:

Ինչո՞ւ: Որովհետեւ աշխարհը հեռու մնաց մտերին
ու չապիր ներկայութիւնը աստուածային Մանուկին:
Աստուածային Մանուկին Մոնթելը թող հրաւէրն ու
կոչը դառնան բոլոր բարեացական մարդերուն, որոնք
գիտեն խոնարհիլ, երկրպագել ու աղօթել:

Այո՛, աղօթել մանաւանդ, որովհետեւ աշխարհ եւ աշ-
խարհի մեծերը՝ աւելի քան երբեք աղօթքի պէտք ունին:
Աղօթենք անոնց համար, որ աղօթել չեն գիտեր, նա-
եւ անոնց համար, որ աղօթել չեն ուզեր:

Չմոռնանք, որ անոնք ալ այդ Մանուկին քոյր-եղ-
բայրներն են, գնուած իր արիւնով, գանոնք ալ կը սի-
րէ, թերեւս քիչ մը ավելի: Պէտք է, որ լաւ գիտ-
անք, թէ Քրիստոս աշխարհ եկաւ կորսուածը փնտռե-
լու եւ գտնելու:

Այո՛, կորսուած ոչխար: Չէ՞ որ Բարի Հովիւը ինի-
սնինը ոչխարը թողուց, գնաց կորսուածը վերագրու-
նելու, երբ զայն գտաւ, ո՞չ թէ զրաւ իր կունակին՝ իբ-
րեւ շալակ, այլ իր ուսերուն՝ սիրոյ եւ գուրգուրանքի
հալ:

Թող բազմապատկուի աղօթքները, որպէսզի հզօր
պետութիւններուն ղեկավարները քմահաճօրէն չխա-
ղան ազգերուն ճակատագիրով: Նաեւ աղօթենք զրա-
մատէր մարդերուն, գիտութեան մարդերուն, մամու-
լի, ձայնասփիւռի ու պատկերասփիւռի մարդերուն,
որոնց ձեռքերուն մէջ է ժողովուրդներուն վերելքը, եւ
նոյնքան՝ վայրէջքը:

Թող այս բոլոր մարդերը իրենց ձայները խառնեն ու
միաձուլեն հրեշտակներու ձայնին եւ յիսթօք երգե-
փառք Աստուծոյ՝ բարձունքներուն վրայ, եւ խաղաղու-
թիւն երկրի՝ բոլոր բարեացական մարդերուն:

Այն ատեն միայն պիտի կարենանք հռչակել 2003ի
Մոնթելը՝ ՄՆՈՒՆԻ ՍԻՐՈՅ, ԵՂԱՅԻՆ ԱՍԻՐՈՒԹԵԱՆ
ՈՒ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ...

Հ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ ԱՇԳԱՐԵԱՆ
Ընդհանուր փոխանորդ
Հայ Կարողիկ պատրիարքական թեմին

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՉՈՒՆԻԷԻ ԱՉԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆԸ

Չորեքշաբթի, 24 Դեկ-
տեմբեր 2003ին, Ն. Ս. Օ.
Տ. Տ. Արամ Ա. կաթողի-
կոս Մեծի Տանն Կիլիկիոյ,
ընկերակցութեամբ միա-
բան հայերու, առաւօտ-
եան ժամերուն անակնկա-
լօրէն այցելեց Ազգային
Ազգային Բուժարանը:
Նոր Տարուան դիմաւոր-
ութեան ու յառաջիկայ
Ս. Մննդեան տօնական
օրերու առիթով, եկեղեց-
ւոյ հովուական կեանքի
արտայայտութիւն եղաւ
վեհափառ հայրապետին
այցելութիւնը, Ազգային
այս հաստատութեան մէջ
պատասխարեալ հիւանդնե-
րուն ու ծերունիներուն
համար:



տատութեան բոլոր յար-
կարափոխները, ու այցելեց
անկողնոյ ծառայող
հիւանդներու եւ ծերունի-
ներու զոյգ բաժանմունք-
ները: Վեհափառ հայրա-
պետը մօտէն հետազոտե-
լուով հաստա-
տութեան ներս
տարուող խնամ-
քին, բժշկական թէ՛
խնամատարական
վերաբերմունքին,
գնահատեց կատար-
ւող աշխատան-
քը: Միաժամանակ
ան իր մասնագի-
թիւնը յայտնելով
կարգ մը երեւոյթ-
ներու մասին,
անհրաժեշտ թե-
յադրութիւնները
կատարեց ներկայ
անձնակազմին:
Տօնական օր մը
հանդիսացաւ վե-
հափառ հայրապե-
տին այցելութիւնը,
պատասխարեալներուն հա-
մար, որոնք երգերով ու

արտասանութիւններով
իրենց սէրն ու երախտա-
գիտութիւնը յայտնեցին
հայոց հոգեւոր Տօր, իրենց
ընծայուած գուրգուրան-
քին ու սիրոյն համար ազ-
գային հաստատութեան
ներս: Վեհափառ հայրա-
պետը միջակապէս տրա-
մադրեց մէկ առ մէկ այցե-
լելով եւ հիւանդներուն ու
ծերունիներուն հետ
առանձին խօսակցութիւն-
ներ ունենալով, լսելու գի-
րենք ու մօտէն հե-
տաքրքրուելու անոնց
տրուած խնամքով:
Այս առիթով, վեհա-
փառ հայրապետին կողմէ
խաչեր ու աղօթագիրքեր
բաժնեցին միաբան հայ-
րեր: Դարձեալ, անձեռոց-
ներ, կարկանդակ ու այլ
նուէրներ եւ տրուեցան
պատասխարեալներուն,
որոնք ազնուօրէն նուիր-
ւած էին տէր եւ տիկին
Գրիգոր եւ Սիւրբ Շու-
ժուհեանի կողմէ:



Արամ Ա. կաթողիկոս
իրեն ընկերացող միաբան-
ներով շրջապայեցաւ հաս-
տատութեան բոլոր յար-
կարափոխները, ու այցելեց
անկողնոյ ծառայող
հիւանդներու եւ ծերունի-
ներու զոյգ բաժանմունք-
ները: Վեհափառ հայրա-
պետը մօտէն հետազոտե-
լուով հաստա-
տութեան ներս
տարուող խնամ-
քին, բժշկական թէ՛
խնամատարական
վերաբերմունքին,
գնահատեց կատար-
ւող աշխատան-
քը: Միաժամանակ
ան իր մասնագի-
թիւնը յայտնելով
կարգ մը երեւոյթ-
ներու մասին,
անհրաժեշտ թե-
յադրութիւնները
կատարեց ներկայ
անձնակազմին:
Տօնական օր մը
հանդիսացաւ վե-
հափառ հայրապե-
տին այցելութիւնը,
պատասխարեալներուն հա-
մար, որոնք երգերով ու

ԱՐԴԵՕՔ ՎՐԱՍՏԱՆ ՕԹԱՆԻ ԱՆԴԱՄ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՅ

Վրաստանի մէջ այս-
պէս կոչուած թաւաշայն-
ղափոխութեան ետք հաս-
նազէտներ կը կարծեն, որ
կառակ անոր որ բաւական
ժամանակ անցած է, սա-
կայն նախագահական
աթոռին համար սկսած
պայքարը կիրքերը շեղա-
ցուցած է ամբողջ Վրաս-
տանի մէջ: Նախագահա-
կան աթոռի գլխաւոր յա-
ւակնորդ Միխայիլ Սաւա-
կաշվիլի իր նախընտրա-
կան արշաւը սկսած է
ընդգծուած հակառուսա-
կան եւ կարելի է ըսել հա-
կաճարական ելոյթնե-
րով: Իր արեւմտամէտ
հայեացքներով յայտնի
քաղաքական գործիչը եւ
ընդհանրապէս ներկայիս
իշխանութեան գլուխ-
կանգնած ետեակը չի ծած-
կեր իր ցանկութիւնը շա-
րունակելու Շեւարտնա-
ծէի վարած արտաքին քա-
ղաքականութիւնը, որ
բազմաթիւ մեկնա-
բաններու, վերջինիս ան-
կումին հիմնական պատ-
ճառն էր:

Վրաստանի նախագահի
պաշտօնակատար Նինօ
Պրեճմանի մէջ տեղի ու-
նեցած հանդիպումը
աւարտած է ապարդիւն:
Հակառակ անոր որ կող-
մերը յոյս յայտնած են, որ
վերջի վերջ իրենք պիտի
յաջողին ընդհանուր լեզու
գտնել, սակայն վերլուծա-
բանները կը կարծեն, որ
Աճարիան պիտի չմաս-
նակցի նախագահական
ընտրութիւններուն:
Աճարիոյ նախագահ Աս-
լան Ապաշիւճէն նշած է, որ
անօրինակ քննարկ իշ-
խանութեան եկած մար-
դոց ան պիտի չօգնէ օրի-
նականացնելու իրենց իշ-
խանութիւնը:

Վրաստանի մէջ ղէպե-
րուն զարգացումը ցոյց
կու տայ, որ իշխանական
եռեակը նոյնիսկ նախա-
գահական ընտրութիւննե-
րէն ետք մեծ խնդիրներու
առջեւ պիտի կանգնի թէ՛
անջատողականօրէն տրա-
մադրուած ինքնավարու-
թիւններուն, թէ՛ քայքայ-
ման տնտեսութեան եւ թէ՛
հիւսիսի դրացի Ռու-
սիոյ հետ ունեցած խնդր-
ներու պատճառով:
Այս պայմաններուն
մէջ Վրաստանի նոր ղեկա-
վարութիւնը, ինչպէս որ
էր Շեւարտնաճէի պարա-
գային, իր յոյսը կը դնէ
Արեւմուտքի օգնութեան
վրայ: Իսկ վերջինս մէկ
կողմէ հաւանութիւն տա-
լով Վրաստանի արտաքին
քաղաքականութեան
արեւմտամէտ ուղղու-
թեան եւ յայտարարելով,
որ կողմ է թիֆլիսի ցան-
կութեան՝ դառնալու
ՕթԱՆի անդամ, միւս
կողմէ ալ չի շտապէր
Վրաստանին էական օգ-
նութիւն ցոյց տալ: Սեր-
պական սեկտորի իշ-
խանութեան եկած Վրաս-

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է
ԿԻԼԿԻՎ ԲԱՌ-ԽԱՂ
ՀԱՅԵՐԵՆ ՏՐԱԿԵԼԵ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սեր սիրելի ժողովուրդի գաւակներուն կ'ուզեմք
յայտնել, թէ Ազգային Առաջնորդարանը ծրագրած
է Լիբանանի Ազգային գերեզմանատուներու իրա-
վիճակը կարգաւորել եւ բարեգործել:
Այս ծրագրին սկզբնական եւ կարեւոր բաժինը
կը կազմէ դամբարաններու կալուածագիրներու
ստուգումը եւ կարգաւորումը:
Բոլոր այն ազգայինները, որոնք Ազգ. գերեզմա-
նատան դամբարանի կալուածագիր ունին, իրենց
անունը կամ անմիջակապ հարազատին անունը եւ
կամ հետու բարեկամի մը անունը (բայց իրենց քով
պահ դրուած) պարտին շրջանի եկեղեցւոյ թաղա-
կանութեան գրասենեակը ներկայանալ ամէն օր
կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00 եւ ներկայացնել:
1.- Դամբարանի կալուածագիրի լուսապատճե-
նը:
2.- Դամբարանի կալուածագիրի անունատի-
րոջ ընտանեկան իխրած քայտ լուսապատճեն:
3.- Դամբարանի կալուածագիրի անունատի-
րոջ ժառանգութեան իրաւաստութիւն ունեցող ան-
ձին անունը, ժառանգական կապը հաստատող
ընտանեկան իխրած քայտ, հասցեն եւ հեռաձայնի
թիւերը:
4.- Կալուածագիրի անունատիրոջ կամ անմի-
ջակապ ժառանգորդի երկրէն դուրս բացակայու-
թեան պարագային արտասահմանի հասցեն, հեռա-
ձայնի թիւը, Ե-ճամակ եւ անունատիրոջ հետ
ժառանգական կապը հաստատող փաստաթուղթեր:
5.- Կարելի եղած չափով արձանագրել տուեալ
դամբարանի մէջ թաղուած անձերուն անունները,
ազգականակա կապը եւ թաղման թուականները:

ԵԱՆՕԹ.- Կը խնդրուի արտասահմանի թեր-
թերէն արտատպել:
ԴԻՒՆ
ԱՉԳԱՅԻՆ ԱՆԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՄՈՆԻՏԻՆԿ ՎԱՆԱՅ ՍՓՈՐ

Նոր յայտագիրներու ծիրին մէջ 1 Յունուար
2004էն սկսեալ «Վանայ Չայն»-ը շաբաթական հե-
թակամութեամբ պիտի ձայնագրուի «ՄՈՆԻՏԻՆԿ
ՎԱՆԱՅ ՍՓՈՐ» ԽԱՂ - ՄՐԳԱՄԸՐ, որուն մասնա-
կիցները Մոնտիալի դրութեամբ պիտի մրցին իրա-
րու դէմ եւ վերջաւորութեան առաջին երեք դիրքե-
րը գրաւողները պիտի ստանան արժեքաւոր նուէր-
ներ:
Անոնք, որոնք կը փափաքին մասնակցիլ այս
մրցամրցին, պէտք է որ մինչեւ Երեքշաբթի, 30 Դեկ-
տեմբեր 2003 հեռաձայնեմ «Վանայ Չայն»՝
01-267657 եւ 01-241199 թիւերուն, արձանագրու-
ելով քարտուղարութեան մօտ:
ԱՃԱՊԱՐԵՅԷՔ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԷՔ
«ՄՈՆԻՏԻՆԿ ՎԱՆԱՅ ՍՓՈՐ»-ԻՆ

BALTAYAN ELECTRIC

Panasonic
GREAT SAVINGS
38,5\$
33\$
66\$
192,5\$
144\$
sacotel

- Caller ID
- Caller ID Memory (50 Entries)
- 50-Station Speed Dialer
- Up to 20 Stations Redial Memory
- 2-Line LCD Display with Clock
- Navigator Key for Easy Operation
- Call Restriction / Dial Lock
- Telephone Line-Powered Operation
- One-Touch Redial
- Navigator key for easy operation
- 64-level holdtone
- Help key for simple instructions
- Fax pager call
- Falling function
- 10-page document feeder
- Monitor speaker for on-hook dialing
- Flash directory dialing
- Electronic Volume Control

LIMITED QUANTITY OFFER VALID UNTIL 31st December, 2003
Ս. մասնագիտ. Պրեճ Համուտ, Արմենիա պողոտայ, հեռ. 01-262901
Ք. մասնագիտ. Տորա, հեռ. 01-261800

«Հայաստանի
Հանրապետութիւն»
(Արեւմտահայկեանի
վերածնունդ)

Գրական Էջ

ՀԱՃԵԿԱՆ ՆՈՐ ԲԵՄ ՄԸ

«Դարավերջի այս թոհ ու բոհի մէջ, երբ դրամի մենատիրութիւնը սփռուել է ոչ միայն առօրեայ կեանքի, այլ նաեւ մեր մտածողութեան վրայ, երբ արեւմտեան սինեմայի, հեռուստատեսութեան եւ մամուլի հսկայ հիմնարկութիւնները մեր ձաշակը կազմաւորում են ըստ իրենց եկամտի եւ շահոյթի, բնական է, որ ոչ-հասութեամբ հիմունքների վրայ մշակութային աշխատանք տանելը եթէ ոչ պարզամտութիւն, առնուապէս երազային թուայ: Բայց չէ՞ որ մենք էլ նոյն նիւթիցն ենք սարքուել՝ ինչ որ երազները» (Վ. Շքսպիր):

Մշակութային յստակ կեց-ւածքի մը արտայայտու-թիւնը հանդիսացող վերի ցախադասութիւնները մեկնաբանու-թեան չեն կարողոր: Անոնք լաւա-գոյնս կը բացատրեն արեւմտեան, աւելի ճիշդ՝ ամերիկեան սպառողա-կան «մշակոյթ»ի անհոգի եւ մակե-րեսային բովանդակութեան, անոր հետապնդած նպատակներուն եւ սպառնացող վտանգին դէմ ծառա-նայու այն քաղաքակրթական տա-գանալը, գոր փոքր ժողովուրդներու արուեստագետները չէ որ կ'ապրին միայն եւ որուն ներկայացուցած վանդակ մասին, վերջին տարիներուն, սկսկան արտայայտուիլ Գեթ-մանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Եւ-րոպական այլ քաղաքակրթ բերկի-րներու բազմաթիւ մտաւորականներ ու արուեստագետներ:

Ժողովուրդներու մշակութային-քաղաքակրթական դիմագիծի պահ-պանման հրամայականը օրակարգի վրայ է: Մշակութային-քաղաքակր-թական համաշխարհայնացման դէմ աշխարհի չորս ծագերուն ծաւալող հակադրեցումները լուրջ պատճառ-ներ ունին: Խորշակի ուժգնութեամբ սպառնացող վտանգին դէմ կարելի չէ ձեռնուղանալ եւ հանգիստ սրտով մտախ, որովհետեւ այս ամերիկեան քամիին մարտահրաւէր կը կարող ոչ միայն ժողովուրդներու տնտե-սական, քաղաքական եւ ինչ-պետե-ական անկախ յարաբերութիւններուն, այլեւ հիմնականիւ - ժողովուրդնե-րու դարաւոր ինքնութեան, ինքնու-րոյն քաղաքակրթութեան, ազգային դիմագիծին, ոգիին:

Վտանգը համամարդկային տարո-ղութիւն ունի: Հարցը կը վերաբերի բոլոր ժողովուրդներու մշակութա-յին անկախ եւ ինքնագործ դիմագի-ծի գոյութեան, որուն անփոխարինե-լի արժեքին եւ մարդկերտ կարեւո-րութեան գիտակից շրջանակները բնական է որ դիմեն ինքնապաշտ-պանութեան զանազան գէներուն, որոնցմէ մէկը Շէքսպիրի մատնա-նշած երազն է:

1997ի ամբան իր գերօ համարը լոյս ընծայած «Հանդէս գրականու-թեան եւ արուեստի» եռամսեայ թեր-թի խմբագրականէն քաղուած վերի մուտքը բարացողական հաստատում մըն է անտարակոյս: Թեհրանաբնակ խումբ մը հայ երիտասարդներու նա-խածնուրթիւնը հանդիսացող այս գրական-գեղարուեստական եռամս-

եան, որուն առաջին թիւը սակայն լոյս տեսաւ իր գերօ համարէն ուղիղ չորս տարի ետք Դեկտեմբեր 2001ին, իբրեւ անուղղակի շարունակութիւնը «Լոյս» երկշաբաթաթերթի, իր առա-ջին իսկ էջէն կը յատկանշուի ազգա-յին բարձրորակ արուեստի եւ միջազ-գային լուրջ շարժումներու արձա-գանգելու մշակութային քաղաքակ-նութեամբ: Արտօնատեր եւ գլխաւոր խմբագիր Վարուժ Սուրեհեանի հրա-տարակած «Հանդէս»ի մեր տրամադ-րութեան տակ գտնուող քանի մը թիւերը, իրենց այլազան եւ հարուստ բովանդակութեամբ, կը ներգրաւեն ընթերցողը եւ անոր կը ներկայացնեն բազմաբովանդակ, հետաքրքիր ու լուրջ ընթերցումներու խոստումը:

35 - 50 տարիքի միջեւ տարուե-րող խումբ մը իրանահայ տղոց հա-ւաքական ճիգին արդիւնքը հանդի-սացող այս երիտասարդական եռամս-եան կը բացուի գրականութեան եւ արուեստի զանազան ոլորտներու ներկայացնելու համար ազգային բո-վանդակութեամբ ու ժամանակակից արուեստով յատկանշուող նարտա-րապետներ, գեղանկարիչներ, ֆիլ-մարուեստագետներ, թատերագե-տներ, մտաւորականներ, բանաստեղծ-ներ: Մէկ խօսքով՝ ընթերցասեր լայն հասարակութեան ուշադրութեան ար-ժանացնելու համաշխարհային ժա-մանակակից հնչեղութիւն, բայց եւ հայկական գտարիւն բովանդակու-թիւն ու ինքնուրոյնութիւն ունեցող այնպիսի արժեքներ, ինչպիսիք են նաեւ արտապետ եւ նկարիչ Ռուստոմ Ոսկանեան, շարժապատկերի անու-նի բեմադրիչ Արտաւազ ֓Ֆելչեան, թատերական գործիչ Արթի Յովհան-նիսեան, Յովհաննէս Մասեհեան եւ պարսիկ ժամանակակից գրական դէմքեր Ֆերիդուն Մոշիրի, Ահմադ Շամլու, Հուշանգ Գոլշիրի եւ ուրիշ-ներ:

Արդարեւ, գուցայ եւ ճաշակաւոր իր սեւ ու ներմակ ձեւաւորումով ըն-թերցողը նախատրամադրող հրատա-րակութիւն մըն է «Հանդէս»ը, որուն առաջին համարը եթէ իրրել առանցք ունի արդի թատրոն ու հայկական ժամանակակից ֆիլմարուեստը, երկ-րորդը կը կեդրոնանայ իրանահայ տղանդարու արուեստագետ Արթի Յովհաննիսեանի շարժապատկերա-յին - թատերական հարուստ վաստա-կին վրայ: Երկխօսութեամբ, ուսում-նասիրական լայն ընդգրկումով եւ մշակութային անդրադարձներով յատկանշուող վերոնշեալ բաժինները աւելի կ'ամբողջանան, երբ անոնց ստեղծած վաւերական մթնոլորտը կը հարստանայ գրական ինքնագիր ստեղծումներու, թարգմանութիւննե-րու եւ գրականագիտական յանդիմ-ներու լրացուցիչ էջերով, որոնց շնորհիւ «Հանդէս»ը կ'արդարացնէ իր գոյութիւնը եւ կը դառնայ գրա-կան-գեղարուեստական շահեկան բեմ մը: Պարզ խօսքով՝ նոր օրերու պահանջներուն ընդառաջող բազմե-րանց եւ ուշագրաւ իսկական հանդէս մը:

Ս. ԿՐԻՍՏՈՍԵԱՆ

ՍԿԻՉԲ...

Ամէն ինչ սկուտեց այսպէս. մի խումբ ընկերներով որոշեցինք մեր շաբաթական հանդիպումների ընթացքին արժարծուած նիւթերն ու յօդուածները կարգի բերել եւ գրականութեան կամ արուեստին վերաբերող ինչ-որ թերթում հրատարակել: Իսկ, քա-նի որ իրանահայութիւնը չունէր նման մի թերթ, որոշեցինք հե՛նց ինքներս ձեռնար-կել դրա հրատարակութիւնը: Սակայն, մի բան որ բնաւ չէինք կարող պատկերացնել, ժամանակի տեւողութիւնը էր նման մի ծրագիր իրականացնելու համար:

Արտօնութեւն ստանալու համար աւելի քան հինգ տարի տեւած ժամանակաշրջա-նում շատ բան փորձեց: Մեր «Խմբագրական» կազմից հետագան բանաստեղծ Նոր-վանը, որն անկախ իր կամքից արտագաղթեց ԱՄՆ, եւ Ռազմիկ Ամիրխանեանը, որն իր կամքով հաստատուեց Հայաստանում:

Իսկ դրանից բացի, բնական է, որ անորոշ վիճակում սպասելը հանելի բան չէ: Ու-րեմն՝ որպէս փորձ, սահմանափակ բուռով ու պատճենահանման ձեւով հրատարակե-ցինք «Հանդէս»ի փորձական համարը (Օգոստոս 1997), որն անուանեցինք «գրօ հա-մար», եւ բաժանեցինք ծանօթ բարեկամների շրջանակներում: Ընդառաջումը մեր սպասածից աւելի էր:

Սա մեզ ոգեւորեց: Իսկ երբ «Լոյս» երկշաբաթաթերթի խմբագրական կազմը մեզ հրաւիրեց համագործակցութեան, անմիջապէս համաձայնուեցինք, որից եւ ծնունդ առան յիշեալ թերթի գրականութեան եւ արուեստի յանելուածի երկու համարները (Յունուար եւ Յունիս 2001), ամբողջովին խմբագրուած մեր միջոցով: Յուրախու-թիւն մեզ, սոյն յանելուածի համարներին արագանգեցին ոչ միայն իրանահայերը, այլ նաեւ Սփիւռքի միւս գաղթօնակիների մտաւորականները: Փաստը՝ գրող եւ խմբա-գիր Գուրգէն Արզումանեանի պատասխան-յօդուածն է Իսպահանի Հայագիտական ամբիոնի դասախօս՝ Ազատ Մաթեանի տեսակետ-յօդուածին, որը տպագրուեց «Լոյս»ի յանելուածի երկրորդ համարում:

Այսպիսով «Հանդէս»ի ներկայ համարը կարելի է շարունակութիւնը համարել նա-խապէս լոյս տեսած գրօ համարի ու նաեւ «Լոյս»ի յանելուածների: Ուրեմն թեւս այս պիսի սկիզբ է դրուում մի նոր թերթի մեր համայնքում: Բայց պէտք է սսել, որ սահմանափակ փորձի շարունակութիւնն է նաեւ:

«Հանդէս»ի գրօ համարի նախաբանում գրեցինք, որ նման մի աշխատանք ձեռ-նարկելը երազի է նմանում, եւ յոյս յայտնեցինք, թէ դուր լինեցողները կ'ընդ-նակցեց այդ երազը: Այժմ շատ համար հրատարակուած մեր միջոցով, երազը գերթէ իրա-կանացի է, եւ մենք աւելի եւս տես ենք կարիքն գգում ձեռնարկութեանը, որպէսզի այս իրականութիւնը յարատեւի

(«Հանդէս», թիւ 1)

ԲՆՈՐՈՇ ԷՋԵՐ՝ «ՀԱՆ ԴԵՍ»ԷՆ

ԳԵՏՆԱՓՈՐ ՃԱՄԲԱՆԵՐ

Մնողներս ծնունել են Յարիսկ, չգիտեմ ուսուերէնին ինչքան ծանօթ էք, այո, նշանակում է կայսերական: Առեւտրական երկու երկրներում կայուածներ ունէին, սպրանք էին տանում-բերում: Վիճակները լաւ էր:

Իրենց հետ գործ չունենք, սպրունք ենք մեզ համար, բայց գիտէք, վաճառականներին եթէ գոհ չպահեն յա-ջորդ օրը բոլորին կը կախեն: Ճիշդ է, հայերի թիւը շատ է պակսել, սակայն գիւղերից, գաւառներից գալիս ու լցուում են:

Ֆրանսերէնը աշխարհ մուտք գործելու բանալին էր: Ի ձեռն Գաւոր Պետրոսի:

Հա՛հ, ինչ կատակասէր մարդ դուրս եկար: Ուրեմն, հայերէնը պարագում էին մասնաւոր, երեխաները ստում էին լաւ կը լինի պարուն Ամուրի ոտքը կոտորուի ու չգայ: Համոզեցի իրենք մարդը այդ դասաւանդում-ների հասոյթով է սպրունք, ընդունեցին սովորել, թէ՛ եւ պէտք է խոստովանեմ, որ նա հօրից ժառանգած կալ-ւածներ ու հարստութիւններ ունէր դիզած:

Կառավարական պաշտօնեաներին ծանօթ էին, նրանք ծնողներն խորհուրդ տուեցին, թէ՛ այստեղ այլեւս ապահով չէ եւ լաւ կը լինի փոխադրուէք Պարսկաստան: Ընդառաջելով նրանց խորհուրդին, կուժերի մէջ թաղ-ւած ոսկիները իրենց հետ առած, եկան հասան Սալ-մաստ:

Արզանի քարիւղի ընկերութեան պաշտօնեայ էի, բնիկ թաւրիզեցի, այդ կողմերում ի՞նչ գործ ունէի, ոչ՛ կեանք է, ինչ արած: Ամերիկեան դպրոցը հագլու աւար-տած անգլիացիներից հրաւէր ստացայ, ընդունեցի եւ եղբայրներս հետ, վարպետ արծաթագործներ էին, տե-ղափոխուեցինք Արազնա:

Նոր գործիս համար դիմումնագիր ուղարկեցի, պատկերացրէք, պաշտօնական մի թուղթ պահանջեցին, որ վկայի ես ողջ եմ, սաղ եմ: Դոքտոր, կարելի է խնդրեմ նման մի փաստաթուղթ ստորագրես:

Յետոյ այնտեղ հիմնադրեցին մի դպրոցնոց: Ծահը հրամայեց իրենցից տուրք չպահանջուի: Հետագային, Անդրանիկը 60 կամաւորներով սահմանը անցաւ եւ Սալ-մաստի շրջակայքում դիմադրեց թուրքերին:

Խնեթ է, բոլորի ներկայութեամբ ասում է Հայաս-տանը թատրոն չունի, հայրն էլ պնդում է իրենք հայե-րէնը հայերէն չէ եւ կրում է ուսուերէնի ազդեցութիւն:

Մարդահամար չի եղել, որ ճիշդ թիւը իմացուի, բայց ելոյթներին սրահները լեփ լեցուն են, նայում ես սրա-հին, ծանօթ ու հարազատ դէմքեր այլեւս չկան, քսան հացարից աւելի հայ չի մնացել:

Այն բոլորը պատմում եմ, որ ասեմ դարբնոցը խոր-քում գինագործարան էր, գինամթերք էր մատակարա-րում ֆիտայիներին:

Պարուն Ամուրի ոտքը չկոտորուեց եւ մենք սովորե-ցինք նաեւ հայերէնը, փոխադրուելով Ֆրանսա աւար-տեցի Ֆրանսական գրականութիւն, catacombe?

Դանիէլեանները այնտեղ բուժարան ունէին, խօսք է, չհաւատաք այդ ընկերութեան բոլոր պաշտօնեաները մասն են եղել, մեծ եղարայր էլ այդ տարիներին նոյն ընկերութեան մէջ է ծառայել:

Երկու տարեկան էի եղբայրս եկաւ Ամերիկա ուսա-նելու: Երբ հայրս մահացաւ, որոշեցինք եղբորս միա-նալ: Այն տարիներին կլենտլուքում մարդ չկար, հիմա է, որ չորս խանութից մէկը հայկական նպարատուն է եւ չորս հայից մէկը՝ բանաստեղծ:

Կարելի է, ինչու ոչ, պայմանով վարակիչ հիւանդու-թիւն չունենաս:

Չունեմ դոքտոր ջան, սիրուց բացի:

Սեղանի շուրջ կային հայաստանցիներ, շատ վրդո-վեցին, իրաւունք ունես սսելու, որ մենք էլ պարսիկ ենք: Դուք հայաստանից էք, չէ՞:

Խոստացան երեսուն օր յետոյ մեր կրին քարտը կը ստանանք, երեք օր չանցած արկղի մէջ գտանք մեր թուղթերը: Սկսեցի որպէս բուժօրոյ աշխատել հիւան-դանոցում, ամէն ինչ լաւ էր, մինչեւ որ մի հիւանդ ըն-կաւ վրաս ու ողնասիւնս վնասեց:

Ճշգրիտ թիւը չեն յայտարարում, որպէսզի կարողա-նան խորհրդարանում պատգամաւոր ունենան, դժուար չէ կուահել, ինչ որ աւելացել է այստեղին, պակսել է այն-տեղից: Մնացողը չեմ, երկու ամսից կը վերադառնամ:

Քեթիլքօմները գետնափոր ճամբաներ են եղել ընդ-յատակեայ հաւաքների յարձակուողներից խոյս տա-լու համար, վերջերս Ֆրանսայում պեղումների ընթաց-քին գտան բազմաթիւ քեթիլքօմներ: Ըծեր հաւաքների ներկայ եմ եղել, he is genius:

Ինչքան բան ես իմանում աղջիկս:

Ճիշդ է, Հոլիվուդը խենթանոց է, բայց այն տարի-ներին, երբ մենք եկանք ամենալաւ քաղաքն էր, տե-նես կը գտնի՞ր նախկին փառքը, կը տեսնե՞նք այդ օրը, դա երկրորդական է:

Դուք էլ քեթիլքօմներով եկա՞ք:

Ամուսինս է, կորցրել է լսողութիւնը:

Սա էլ ասեմ, երբ կուժերի բերանը բացեցին, փո-խարէն մէջը գտան խորած պանիր, հոտակէտ:

ԳՈՒԲԵՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ԻՄ ԻՍԿԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ

Որոշել էր նրան սասել իր իսկական անունը: Որոշել էր սասել. «Դրամի փոխարէն նարգիսներ նուրի ինձ»:

Որոշել էր սասել. «Մեքենայից ինչնք ու նստենք զրօ-սայգու ամենալուսաւոր լայտերի տակ, որպէսզի ան-ցորդները տեսնեն ձեռքիս ծողկփուկները»: Որոշել էր նրա հետ խօսել իր նախաիրութիւնները մասին ման-բաժանօրէն եւ սասել, որ սիրում է կեռաս ու նախընտ-րում՝ կանաչ գոյնը: Որոշել էր սասել. «Dust in the wind» երգն ամէն անգամ լսելիս յուզուում եմ»: Որոշել էր սասել.

«Սրճի բուրմունքը յուշում է հեռաւոր իմ մանկու-թիւնը»: Որոշել էր նաեւ պատմել, թէ ինչպէս մի օր դպրոցից փախել էր դասարանի տղաների հետ, աւելացը-նելով, որ՝ «ես փախածների խմբի միակ աղջիկն էի»: Որոշել էր նրանից լսել. «Ո՞ր ֆիլմն էք շատ սիրում»: Որոշել էր նրանից լսել. «Չե՞մ ձանձրացնում ձեզ»: Որոշել էր լսել նաեւ. «Որտե՞ղ կը ցնականաք ընթերցել», եւ նա որոշել էր պատասխանել. «Աւելի լաւ է նստենք այս լուսաւոր լայտերի տակ, որպէսզի...»

Մեքենան, սակայն, թեքուեց եւ քաղաքի ամենամուժ փողոցի ամենամուժ անկիւնում կանգ առաւ, ապա մուժ միջնաշրջներից նրանք բարձրացան մի մուժ սեն-եակ...

... Տուն վերադառնալով անմիջապէս սառը ցնցուղ ընդունեց եւ կարմիր կեռասների ամանը սառնարանից սեղանին դնելով թուղթ ու գրիչ վերցրեց եւ սկսեց գրել...

Իմ իսկական անունը Մարիամ է: Սիրում եմ նար-գիսներ: Սիրում եմ նաեւ կարմիր կեռասներ: Գոյնե-րից նախընտրում եմ կանաչը եւ ամէն անգամ «Dust in the wind» երգը լսելիս յուզուում եմ: Մագերս դարչնա-գոյն է: Մանկութիւնը սրճի բուրմունքի պէս դառն է եւ հաճելի: Մի օր դասարանի տղաները որոշել էին դա-սից փախչել, ես էլ միացայ նրանց: Յաջորդ օրը դպրո-ցի տնօրէնը միայն ինձ ապտակեց, այն էլ այնպիսի մի ապտակ, որ քիչ մնաց զետիւն փուռէի ու յօճգուր-յօճ-գուր լացեի, բայց մի կերպ գապելով յուզմունքս, նար-ետեից շարտեցի. - տղաներին ինչո՞ւ չապտակեցիք: Նա պարտաւորուեց ետ գալու ու մի-մի ապտակ հասցնել միջնաշրջում իմ կողքին շարուած վզածուռ տղաների երեսին: Ես, ի հարկէ գղջացի արածիս համար, բայց, ճիշդն ասած, չէի ուզում նրանք այնուհետեւ ինձ խղա-յին: Հա՛, մոռացայ սասել՝ այդ օրը մենք՝ դասից փախա-ններս կինօ գնացինք ու հնդկական ֆիլմ դիտեցինք: Ա՛խ, որքան կ'ուզէի այդ ֆիլմը նորից դիտել: Ռեստորա՞ն: Ի հարկէ ո՛չ: Աւելի լաւ է նստել զրօսայգու ամենալու-սաւոր լայտերի տակ տեղադրուած ամենականաչ նստարանին...

ԺՈՐԺ ՀԱՄԵՍԵԱՆ

ԳԻԹԱՆՔ

Հուր աչքերն են կախարդում գիշերի մէջ աստղածոր Ակնարկում են ու թարթում գիշերի մէջ աստղածոր Գիտէ կը գայ հրաշքով մի խորհուրդի անմատոյց եւ սպասում է արթուն գիշերի մէջ աստղածոր Գուրգուրում են սերն անգիւսի եւ հմայող մի տագնապ Անուրջների մէջ մարդուն գիշերի մէջ աստղածոր Յօրինում է օրհնանքի եւ ողջոյնի երգ պայծառ եւ լուսինն է լուռ կարողում գիշերի մէջ աստղածոր Խանդաղակաք հալում է եւ հիացքով անաւարտ Լուսափայլ էջն է թերթում գիշերի մէջ աստղածոր

ՅՈՒՍԵՓ ՆԱԶԼՈՒՄԵԱՆ

(26.12.86)

ԱՇԽԱՐՀԸ ԾՈՒՌ Է ՊՏՏՈՒՄ
Երբ աշխարհը ծուռ է պտտում,
Նիտոնի օրէքները ծուռ են գործում,
Խնձորը դէպի յաւերժական երկիցք է գնում,
Եւ օճառն էլ չի մաքրում կեղտը ձեռքի:
Մաղիկը մեր բակի էլ չի բերում,
Գրիչն էլ չի գրում խօսքը սրտի,
Եւ դաշնամուրը մեր տան
ոռնում է:

Լուսինը ցերեկ է ծնում
արեւը կապոյտ է ծագում
Եւ աշխարհը ծուռ է պտտում...

Վա՛յ ինձ,
Ես էլ եմ ծուռել
քեզ ծուռ եմ տեսնում:

ՀԱՆԹ ԲԱՎՐԱՄԵԱՆ

ՉԱՌԱՆՅԱՆՔ

Թակելու ես ապակիս, գիտեմ,
որպէսզի դառնամ շնչող կոպերիդ տիրուհին.
Ժիւնն էլ չի ծածկելու յդի ագուաի սեւութիւնը.
Իսկ լուսաճաշին:
լուսամիտ մարդիկ,
որոնք մաթեմատիկայի չեմպիոններ են
ու բուր չեն,
նրա նք, որ անգիր գիտեն բարդ թուերի արմատները
դատի կը տան մրտ մատներս.
Երեկոյեան քաղաքիդ մեծ բանաստեղծը
սիրահարուելու է ինձ ու կարելու է բերանս:
Ազգիս ջղային կամայք,
որոնք տիրա

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ԱԿՆԱՐԿ

ՍԻԼԻՔՈՆԷ ՇԵՐԵՓ...

Արեւը մար չի մտնել տեղեկատուական արհեստագիտութեան աշխարհին մէջ: Մայրագոյն Արեւելքի երկիրներուն (գլխաւորաբար՝ Ճափոն) մասնագետները իրենց օրը կը սկսին բոլորէն առաջ եւ կը լծուին յեղաշրջող գաղափարներ, նոր գիտեր եւ հետաքրքրական կանէթներ հանրութեան դատաստանին յանձնելու նախապատրաստական աշխատանքներուն: Անոնք համեմատաբար աւելի բախտաւոր են ցամաքամասի աւելի ուշ արթնացող իրենց դրացի երկիրներէն, ուր վնասումները շատ աւելի նուազ են, եւ բազմաթիւ մասնագետներ կը կատարեն հսկայական աշխատանք, շատ փոքր վնասումներով: Հնդկաստան լաւ օրինակ մըն է: Հազարաւոր գիտնականներ, համակարգչագետներ եւ ծրագրողներ կը կատարեն ամբիկական թէ ալ երկիրներու մեծ ընկերութիւններուն գործերը «հնդկական» վնասումներով:

Միջին Արեւելքը «հետեւող» է միշտ: Հոն նոյնպէս թեւ արձանագրուած են մեծ յառաջընթացներ, քարիւղի դրամով կառուցուած են տեղեկատուական արհեստագիտութեան մեծ կեդրոններ, բացուած են միջազգային ընկերութիւններու ներկայացուցչական գրասենեակներ եւ կեդրոններ, տեղական եւ շրջանային մակարդակի կեդրոններ, սակայն հակառակ այս բոլորին, քաղաքակրթութիւններու օրրան Միջին Արեւելքը կը մնայ ներածողի դերին մէջ:

Երոպայ բնականաբար յառաջատարներու կարգին է արհեստագիտութեան մարզին մէջ: Սակայն, ան ցարդ չունի Մայրագոյն Արեւելքի աշխատուժը, ոչ ալ Միացեալ Նահանգներու հսկայական կաշիւը: Ահա թէ ինչու վերջին արթնացողները ամբիկացիք, կը մնան տեղեկատուական արհեստագիտութեան տեքերն ու տիրականները:

Համացանցը գաղութատիրութեան քաղաքականութեան շարունակութիւնն է Միացեալ Նահանգներու համար: Արհեստագիտական նուաճումներ խթանը՝ աշխարհի միակ գերուժը առաւել եւս գերակայ դարձնելու աշխարհի մեծագոյն քաղաքներէն մինչեւ հեռուոր գիւղերուն մէջ:

Համացանցի քարտեսին վրայ Միացեալ Նահանգներու տրուած տարածքը աւելին է՝ քան բոլոր այլ երկիրներունը միասնաբար: Իբրեւ Քոլումպոսի ցամաքամասէն արտածուած «հնարք», համացանցը եւ անոր առնչուող բազմաթիւ դրութիւններ ամէնէն աւելի զարգացած են իրենց ծննդավայր Միացեալ Նահանգներու մէջ:

Ձուգորդները համացանցը եւ, ընդհանուր առմամբ, տեղեկատուական արհեստագիտութիւնը ՄարՏոնալտի, Քոքա Քոլայի եւ Պրիթլի Սփիր-գի մշակոյթին հետ, եւ դեմ յանդիման կը գտնուինք համաշխարհայնացում կոչուած արտադրութեան մը հետ, որ Միացեալ Նահանգներու կատարած նորագոյն ներդրումն է համաշխարհային քաղաքակրթութեան:

Եւ ցաւօք, մենք կը մնանք սպառողները՝ մեր վիզը արտադրողներուն յանձնած: Փոքր ազգերու ճակատագիրն է այս, թերեւս ըսուի: Այս պարտողական հոգեբանութիւն է, ինքնարդարացման ճիգ: «Փոքր ազգ» ըլլալ չի նշանակեր այնքան մը «կու տալ» համաշխարհայնացումի արտադրութիւնները, որ համաշխարհայնացումը մեզ կու տայ: «Փոքր ազգ» ըլլալ չի նշանակեր, թէ պարտադրուած ենք մեր բերանը բանալու՝ «Ճանք Փոտ»-ին, մեր ականջները բանալու՝ ազդեալ ժողովրդեան եւ մեր աչքերը ամէն վայրկեան օժելու համացանցի եւ պատկերասփիւռի «բարիք»ներով: «Փոքր ազգ» ըլլալ չի նշանակեր նաեւ բաւարարուիլ տոլմայով, լսել միայն կոմիտաս, եւ «Ամիրային աղջիկ»ը կարդալ սոսկ:

Մենք է, որ կը ճշդենք, թէ որքան փոքր ենք, եւ այդ մեր տեսլականով հաւատով, եւ անցեալը, ներկան ու ապագան ներդաշնակօրէն իրար միացնելու մեր յանձնառութեամբ: Այո, «փոքր ազգ» ենք: Սակայն կարգ մը ազգեր աւելի փոքր են, քան ուրիշներ: Մենք որ փոքրերու փաղանգին կ'ուզենք պատկանիլ:

Այսօրուան հերիսային բաժին մը ունենալու համար պէտք ունինք, նախեալ առաջ, սիլիքոնէ շերտի: Տեղեկատուական արհեստագիտութեան դարն է այս, բուրդի շերտներուն օրը շատուցանցած է, եւ երկաթէ շերտները միայն կարգ մը պարագաներու կարելի է գործածել: Միւս կողմէ, սիլիքոնէ շերտը անփոխարինելի է...

ԽԱԶԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ


«ԱԶԳԱԿ»Ի

ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՆՈՔԻԱ ԷՆ-ԿԷՅՃ»



«Նոքիա»ի «էն-կէյճ» սարքը կը հանդիսանայ նախատիպ յեղաշրջող արհեստագիտութեան մը, որ կը միաւորէ ըզիջային հեռաձայնն ու գերարդիական ելեկտրոնային խղեր խղալու կարելիութիւնը: Սարքը կարելի է օգտագործել իբրեւ «ՃԻ. Էս. Էմ.» ըզիջային հեռաձայն, «էմ. Փի-Յ փլէյթը», ձայնասփիւռ, ե-նամակներ ուղարկելու եւ ստանալու դրութիւն, ինչպէս նաեւ օրատետր:

Կ'ակնկալուի, որ «էն-կէյճ»-ի յաջորդող տարբերակները առաւել եւս զարգացնեն անոր ընձեռած կարելիութիւնները եւ սարքը դարձնեն աւելի դիւրաւ օգտագործելի:

«էն-կէյճ»-ի մասին յաւելեալ տեղեկութիւններ կարելի է գտնել www.n-gage.com հասցէով կայքին մէջ:

ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ՝ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



Տօնական այս օրերուն համացանցին միջոցով կարելի է քանի մը վայրկեանի մէջ շնորհաւորական քարտեր ուղարկել աշխարհի որեւէ մէկ անկիւնը գտնուող հարազատներու եւ բարեկամներու: Ստորեւ փունջ մը ելեկտրոնային քարտեր ուղարկելու կարելիութիւն ընձեռող լաւագոյն կայքերն են:



- <http://free.bluemountain.com>
- <http://greetings.yahoo.com>
- www.greeting-cards.com
- www.123greetings.com



- www.hallmark.com
- www.egreetings.com
- www.regards.com
- www.e-cards.com/site
- www.zworks.com/forever
- www.audiocard.com
- www.gcards.com

Պատրաստեց՝ Խ. Մ.

ՆԵՐՇԵՆՉԱՐԱՆ

Ստորեւ կը ներկայացնենք երկու դրուագներ՝ քաղուած համացանցի www.getfed.com հասցէով կայքէն: Առաջինն հեղինակը անձամբ է: Երկրորդը՝ «ժպիտ մը», գրուած է Պի. Ճէյ. Սորպիցերի կողմէ:

ԿԱՏԱՐԵԱԼ ԱՂՋԻԿԸ

Ամուրի երիտասարդի մը բարեկամը հարց տուաւ իրեն, թէ ինչու՞ տակաւին չէր ամուսնացած:

«Տակաւին չեմ գտած յարմար անձը... Կը փնտռեմ կատարեալ աղջիկը»:
 «Կրնա՞յ ըլլալ, որ մինչեւ հիմա չես կրցած գտնել առնուազն մէկ աղջիկ, որուն հետ կ'ուզէիր ամուսնանալ», գարմացած հարցուց բարեկամը:
 «Այո՛, կար աղջիկ մը, կարծես թէ ինք էր կատարեալ աղջիկը: Միակ կատարեալը, որուն երբեք էի հանդիպած եմ: Իսկապէ՛ս կատարեալ ամէն բանի մէջը»:
 «Իսկ ինչու՞ չամուսնացար անոր հետ», հարցուց բարեկամը:
 «Որովհետեւ ինք կատարեալ տղան կը փնտռէր...»:

«ԺՊԻՏ ՄԸ»

Ժպիտ մը ոչինչ կ'արժէ, սակայն այնքան շատ բան կու տայ: Կը հարստացնէ զայն ստացողները՝ առանց զայն տուողները աղքատացնելու: Կը տեւէ կարճ պահ մը, սակայն անոր յիշատակը երբեմն յաւիտեան կը մնայ: Մէջ ոք այնքան հարուստ է եւ հզօր, որ կարենայ յարատեւել առանց անոր, ո՛չ ոք այնքան աղքատ է, որ չկարենայ հարստանալ անով: Ժպիտ մը երջանկութիւն կը ստեղծէ տան մէջ, բարի կամեցողութիւն կը տարածէ գործատեղիին մէջ եւ բարեկամութեան ստորագրութիւնն է: Ան հանգստութիւն կը բերէ յոգնած անձերուն, ուրախութիւն՝ յուսալքուածներուն, արեւափայլ՝ տխուրներուն, եւ դժուարութեան պահերու լաւագոյն բալասանն է: Սակայն կարելի չէ զայն գնել, մուրալ, փոխ առնել եւ գողնալ, որովհետեւ եթէ չէ շնորհուած, ո՛չ ոքի արժէք կը ներկայացնէ: Ոմանք շատ յոգնած են քեզի ժպիտ մը շնորհելու: Դ՛ուք տուէ՛ք անոր ժպիտ մը, որովհետեւ ո՛չ ոք այնքան կարիքը ունի ժպիտ մը, որքան ան, որ տալիք ժպիտ չունի:

1 ԷՆ մինչեւ 14 տարեկան փոքրերու Երոպական Վաճառանիշերով հազուստներ

NEW BOY NEW GIRL

MOMDJIAN JUNIOR

Ուրախութեամբ կը յայտնէ, թէ վերաբացած է Չալքայի իր Վաճառատունը, ուր իւրաքանչիւր գնումին համաձայն կ'ընծայէ նուէր մը:

MOMDJIAN JUNIOR
 Ա. մասնաճիւղ: Չալքա, Դեռ: 01-879055
 Բ. մասնաճիւղ: Մար-իլիաս, Մաքսսէտ կեդրոնին դիմաց
 Գ. մասնաճիւղ: Սուր, Իսթիրահաթ թաղ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՊԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Երկուշաբթի, 5 Յունուար 2004թ., երեկոյեան ժամը 9:30ԷՆ սկսեալ, **BIEL PAVILLON ROYAL** սրահին մէջ:

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

Երեքշաբթի, 6 Յունուար 2004, երեկոյեան ժամը 7:30ԷՆ **UNESCO** սրահին մէջ:

ՏՈՍՍԵՐԸ ԿԸ ՎԱՏԱՌՈՒՆ Օբելիք գրախանութ, Ալթիլիաս - Promenade Չալքա Գամազգայինի «Լետոն Շալթ» կեդրոն Գամազգայինի գրախանութ Տիւրքեթ Geka - Սթիւտիօ Վաչէ, Գաճըն:

Schwarzkopf

Մանկապատանեկան

ԼՈՅՄԵՐՈՎ ՏՕՆԸ

Կաղանդի եւ Մոնուդի պատմութիւնը շատ հին է: Տօներուն միջոցով ստեղծող բոլոր տարրերը (եղեւին, ժապակեաներ, մոմեր...) մեզի կը յիշեցընեն, թէ այս առիթով կը տօնուի գիշերուան վերջաւորութիւնը եւ լոյս ի յաղթանակը:

Միայն քրիստոնեաները չեն, որոնք ընտրած են տարուան այս շրջանը տօնելու համար: Հին ժամանակներէն արդէն մարդիկ տօնակատարութիւններ կազմակերպած են Դեկտեմբեր ամսուն. արդեօ՞ք որովհետեւ անոնք պէտք



ունէին հաճելի ժամանակներ անցընել եւ ինքզինքնին վատահեցնել այդ ամէնէն կարճ ցերեկներով եւ ամէնէն երկար գիշերներով օրերուն:

Սակայն 21 Դեկտեմբերէն սկսեալ օրերը կը սկսին երկարիլ: Այս պատճառով է, որ հին ժամանակներուն հռոմէացիները ընտրած են 25 Դեկտեմբերը իրենց լոյսի աստուծոյ՝ Միթրայի տօնը: Ան ճանչցուած էր նաեւ իբրեւ

«անյաղթ արեւը»: Նոյնքան մեծ շուքով տօնելու համար Յիսուսի ծնունդը, 4րդ դարուն Արեւմուտքի քրիստոնեաները կ'որոշեն Մոնուդը տօնել 25 Դեկտեմբերին...

ԻՆՉՈ՞Ւ ՄՈՄԸ ԿԸ ՀԱԼԻ

Բոլոր նիւթերը կը հալին, երբ տաքութիւնը յատուկ ջերմաստիճանի մը կը հասնի: Սառը կը հալի գերօ սստիճանին: Երկաթը կը հալի 1535 աստիճանին: Մոմը կը հալի 80 աստիճանին: Մոմին բոցին տաքութիւնը բաւարար է զայն հալեցնելու համար:

Պատրոյգին շուրջի հալած մոմը «կը սնանէ» մոմին բոցը: Այս ձեւով, վերջաւորութեան ամբողջ մոմը կը հալի: Սակայն թէ՛ մոմը ծոած վիճակի մէջ ըլլայ, հեղուկ մոմը մոմին երկայնքին կը հոսի եւ պաղելով դարձեալ հաստատուն կը դառնայ:

ԶԵՈՒՅԻՆ ԱՅԽԱՏԱՆԸ

ԿԱՂԱՆԴԻ ՄԹՆՈՒՈՐՏ ՄԸ



Գիտէի՞ր, թէ Եւրոպայի կարգ մը շրջաններուն մէջ 18րդ դարէն ի վեր տարեկան սովորութիւն է դնել 12 մոմեր, որոնք կը խորհրդանշէին Գալիլոյ տարուան 12 ամիսները...

Դուք ալ կրնաս այս իւրայատուկ մոմակալներով տան մէջ Կաղանդի մ'ընդունար մը ստեղծել:

Պէտք ունիս Պզտիկ ապակիէ անօթներ, ապակիի յատուկ ներկ, վրձինները մաքրելու յատուկ դեղ, ճերմակ թուղթ եւ պզտիկ մոմեր:

1. Ճերմակ թուղթին վրայ գծէ եղեւինի պատկերը, որ իբրեւ օրինակ պիտի ծառայէ:
2. Թուղթ անցուր անօթին մէջ: Վրձինով եւ ապակի ներկով ընդօրինակէ ծառին օրինակը:
3. Կրնաս անօթներուն կէսին պարագային ներկել միայն եղեւինը:
4. Իսկ մնացած անօթներուն պարագային ներկել եղեւինին շուրջը:

ԽՈՐԱԳԻՐ

ԿԱՂԱՆԴԻ «ՊԻԻՇ»



Անուշեղեցիները կը սիրեն: Եթէ այո, ահա առիթն է Կաղանդի աւանդական կարկանդակներէն «պիւշ» մը շինելու...

Պէտք ունիս 10 ապուրի դգալ ալիւր, 6 ապուրի դգալ սեւ շաքար, 5 ապուրի դգալ կաթ, 4 ապուրի դգալ քրեմ ֆրէշ, 3 հակիթ, 1 թէյի դգալ պէյքինկ փառուրը, 2 խնձոր, 8 չոր ծիրան, 50 կրամ պիստակ, 50 կրամ մաքրուած նուշ, 50 կրամ չամիչ, քստելիք տուրմ, քիչ մը փոշի շաքար:

Պատրաստութիւն 1. Խորունկ ամանի մը մէջ պարպէ ալիւրը եւ շաքարը:

2. 3 հակիթները կտրէ. աւելցուր կաթը եւ քրեմ ֆրէշը:

3. Աւելցուր պէյքինկ փառուրը: Խառնէ զարնելիք գործիքով:

4. 2 խնձորները կեղուէ եւ պզտիկ կտորներու կտրէ: Հանէ նաեւ կանաչ պիստակներուն կեղուէ: Պզտիկ կտորներու կտրէ նաեւ նուշը եւ ծիրանը: Պատրաստէ աման չամիչ, եւ նա բոլոր պտուղները պարպէ խմորին մէջ:

5. Քիչի կաղապարի մը մէջ կարպ քսէ, եւ մէջը պարպէ խմորը: Փուռին մէջ եկէ մօտաւորապէս 30 վարկեան, 200 աստիճան տաքութեամբ:


6. Կարկանդակը հանէ փոսէին մէջէն: Վրան քսէ տուրմի քրեմը, ապա սրսկէ փոշի շաքարը:

Կրնաս «պիւշ» գարգարել Կաղանդի կերպրկալէ թզուկներով:

Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնաս գտնել միւսներն տարբեր Կաղանդ Պապան:



Կրնաս գտնել, թէ իւրաքանչիւր պզտիկ ո՞ր նուիրը ստացաւ:



Կրնաս գտնել պատկերին մէջ գտնուող հինգ անբնական մանրամասնութիւնները:

Պատաստեց՝ ԶՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

www.hamazkayin.com

ՔԱՆԻ ՄԸ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

Երբ մենք կը մտածենք Կաղանդի մասին, անմիջապէս կ'երեւակայենք. Եղեւին, լոյսեր, նուիրներ...



ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌԻՆ ԳՈՒՆԴԵՐԸ

Մինչեւ 19րդ դար, Կաղանդի ծառին վրայ կը կախուէին խնձորներ, որոնք կը խորհրդանշէին Աստուածաշունչին մէջ յիշուած դրախտի ծառին պտուղները: Սակայն, կ'ըսուի, թէ տարի մը խնձորի հունձքը բաւարար չէ եղած, եւ Միթրայը պտուղէն ապակեգործ մը մտածած է զանոնք փոխարինել ապակիէ գունդերով:

ՀՆԴԿԱՆՎԱԾ

Տօներուն հնդկահաւ ուտելու սովորութիւնը շատ հին է: Ան սկսած է 20րդ դարու սկիզբները: Տօներուն նախօրեակին մարդիկ իբրեւ մատաղ կը մորթէին բաղ, հնդկահաւ կամ խոզ: Ներկայի մեծ խրախճանքը ո՛չ մէկ կրօնական իմաստ ունի: Ժամանակին, քրիստոնեաները շատ թեթեւ ընթիք մը կ'ընէին կէս գիշերուան պատարագէն առաջ:

ԵՂԵՒՆ

Տեսակաւոր աւանդութիւններ կը պատմեն Կաղանդի եղեւինին պատմութիւնը: Օրինակ՝ կ'ըսուի, թէ միջնադարուն ծառերը ծաղկած են, երբ Յիսուս ծնած է: 1521ին է, որ կը յայտնուի Ալլապի մէջ մեզի ծանօթ առաջին Կաղանդի եղեւինը:

ՃԻՒԳԻ ԿՏՈՐԸ (ՊԻԻՇԸ)

Մոնուդի գիշերը մարդիկ կ'այրէին տոկունութիւն խորհրդանշող կաղնիի փայտ, կամ պտղատու ծառ մը, որ առատութեան նշան մըն էր: 1870ական թուականներուն է, որ այս փայտէ կոճղը կը վերածուի կարկանդակի կոճղի:

ՆՈՒԵՐՆԵՐԸ

Գիտէի՞ր, թէ մինչեւ 19րդ դար միայն ծառաները նուէրներ կը ստանային Մոնուդին: Հետագային,

մարդիկ յաճախ սկսան պզտիկներուն նուիրել նարինջ մը, որ հազուադիւս պտուղ մըն էր, եւ պզտիկները տօնէն ետք ամէն օր անկէ կտոր մը կ'ուտէին:

ՄՈՍԵՐԸ

Դեկտեմբեր ամսուն մարդիկ յաճախ լոյսի նուիրուած տօներ ունեցած են: Այս ձեւով, գիտէի՞ր, թէ 13 Դեկտեմբերին Շուէտի մէջ կը տօնուի Սրբուհի Լիւսի տօնը, որ լոյսի տօնն է: Լիւսի անուրը յառաջացած է լատիներէն «լիւքս» բառէն, որ կը նշանակէ լոյս:

ԻՆՉՈ՞Ւ...



կանաչ ասեղները: Այս ասեղները շատ տոկուն մանր տերեւներ են, որոնք ցուրտէն չեն վախնար: Այս պատճառով է, որ ծառը զանոնք ամբողջովին չի կորսնցնում ձմարան: Այս ձեւով, անոր ամէնէն հին ասեղները կը թափին աշուն, եւ նորերը կը բուսնին զարնան: Հետեւաբար, Հետեւաբար, անոր ամէնէն հին ասեղները միշտ կանաչ կը մնան, որովհետեւ իր բոլոր ասեղները նոյն ժամանակ չի կորսնցնում:

Կաղանդի եղեւինին ասեղները կը թափին Տան մէջ իսկական եղեւին մը շատ գեղեցիկ է: Սակայն ան ի՞նչ ասեղները կը կորսնցնէ:

Արդեօ՞ք որովհետեւ ան կտորուած է: Վստահ անկէ բան մը կը պակսի...

Ճիշդ է: Ան այլեւս արմատ չունի:

Արմատներուն չնորհիւ է, որ եղեւինը կը ծծէ գետնին ջուրը:

Հետեւաբար, առանց իր արմատներուն, եղեւինը այլեւս չի կրնար խմել, եւ ան կը թառամի կտորուած ծաղիկներուն նման:

Մի մոռնար Կաղանդ Պապայէն խնդրելու ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿԻ ԳԱԽԱԹԸ



Գաւթները կարելի է գտնել հետեւեայ գրախանութներուն մէջ

— Բամպպային, Եղեւինի կեղոն, Պոլոս Բամուտ

— Նարկայի, Պոլոս Բամուտ

— Obellx, Մնթիխս

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՆՈՒԳՈՅՆ ՆՈՒԻՐԸ

ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՄԱԽՄԵՐՈՒՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳ

ԵՐԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՀԱՄԱՔԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ



Ռանիա Պրիլոբի գործերը

Երեք երիտասարդ գեղանկարիչներու հաւաքական ցուցահանդես մը տեղի կ'ունենայ Արաբական Մշակութային կենտրոնին մէջ: Իւրաքանչիւր Մայիսին կենտրոնին կողմէ կազմակերպուող նկարչական հաւաքական ցուցահանդեսին նախապատրաստական աշխատանքներուն ծիրին մէջ տեղադրուող այս նախաձեռնութիւնը կը ներկայացընէ անցեալ Մայիսին տեղի ունեցած ցուցահանդեսին ուշադրութիւն գրաւած արւեստագէտներուն գործերը:

Իրենք զիրենք իբրև արուեստագէտ հաստատելու ճամբուն վրայ գտնուող այս գեղանկարիչներուն մէջ աչքի կը զարնէ յատկապէս

Ռուս եւ թեքսիքով, իւրաքանչիւր ոճով եւ արտայայտչականութեամբ:

Յուցահանդեսին իրենց մասնակցութիւնը բերած միւս երկու արուեստագէտներն են Տիայա Տիսպ եւ Յարիմա Քաուսարանի: Մինչ ատաղջին գեղանկարները կը յատկանշուին թեքսիքի հարստութեամբ, անոնք կը պատկերեն լիքսանեան բնաշխարհը, Յարիմա Քաուսարանի գործերը կը թողուն մանկական պարզութեան տպաւորութիւն, ինչ որ կը բացայայտէ արուեստագէտին ներաշխարհը:

Նշենք, որ «Մասախաթ լաուիլայ» («Գունային տարածքներ») խորագիրը կրող այս ցուցահանդեսը կը շարունակուի մինչեւ 30 Դեկտեմբեր:

ԱՅՍՕՐ

- Նկարչական հաւաքական ցուցահանդես՝ «Կրանտ Ե Ժեօն», «Ժամին Ռուպէյ» ցուցասրահ, մինչեւ 31 Դեկտեմբեր:

- Նկարչական հաւաքական ցուցահանդես՝ «Սըր-սըր» Թագարանի «Աշխատանքի սալոն» ցուցասրահին մէջ, մինչեւ 17 Յունուար:

- Նկարչական ցուցահանդես՝ «Քիւլ պիւք», Քրիս Սերֆին - Լէյնի գործերը, «Պրեմի» ցուցասրահ, մինչեւ 7 Յունուար:

- Թատրոն՝ «Քամա ալ արտ, քաղաք մին... ֆաուր», ժամը 20:30ին, «Քազիմ տիւ Լիպան», մինչեւ 29 Փետրուար:

- Լուսանկարչական ցուցահանդես՝ «Պարսելոն-գազու մենթու քաղաք» խորագիրով «Սերվան-թես» հիմնարկին մէջ, Մարտի փողոց մինչեւ 6 Յունուար, ժամը 13:00էն 20:00, բացի Կիրակի օրերէն:

- Նկարչական հաւաքական ցուցահանդես՝ «Սերուդէ Սերուդէ» խորագիրով, «Ժամին Ռուպէյ» ցուցասրահին մէջ, մինչեւ 31 Դեկտեմբեր:

ՕՂԵՐԵՒՈՅԹ

ՇԱՐԱԹ,
27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003
ՊԵՅՐՈՒԹ
ԱՆՁՐԵՒՈՅ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՅԵՐԵՎ՝ 18°C
ԳԻՇԵՐ՝ 11°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝
68%

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳՐԻԳՈՐ ԾԵՐՆԵՋԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱԿԵՏԻՍ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով եւ ՆՈՒԱՐԴ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ մահուան ժե. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Հայաշէնի Ս. Յովհաննու-Կարապետ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԳԼԽԱԴԻՐ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Էշրեֆի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԴԱԻԹ ՍԵՓԵՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԱՐԴԱԵՍ ԳԸԸՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:


ԵՆԱՆՏ ՍԱՆՍԻՐԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԵՏՕ ԵԵՆԻՍԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱԼՊԵՐ ԺՈՋԷՅ ՊԱՂՃԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Ս. Աւետման մատարան մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

ՌԱՉԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԻՊՈՅԱՃԵԱՆԻ (մահացած Զանատա) մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Դեկտեմբեր 2003, Ժուրիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուի սակարանին մէջ օտար դրամանոցներու փակման սակագիները հետեւեալներն են:

Սուրիական թղթակի	28,70 - 28,95 լ.ն.
Քուէթեան տինար	5110,00 - 5135,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տինար	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէուական ռիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ	220,00 - 230,00 լ.ն.
Անգլիական սթերլին	2670,00 - 2680,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1205,00 - 1210,00 լ.ն.
Թրքական լիրա	106,25 - 106,75 լ.ն.
Կիպրական փաունտ	3185,00 - 3210,00 լ.ն.
Ճափնական հապար եէն	13,95 - 14,05 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1148,00 - 1153,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	1115,00 - 1120,00 լ.ն.
Եւրօ	1875,00 - 1885,00 լ.ն.

● ՈՍԿԻ
Անգլիական մէկ ոսկի 158,000 - 163,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի 143,500 - 148,500 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի 132,500 - 137,500 լ.ն.
Մեքսիկական փէսոս 760,000 - 780,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյ ոսկի 19,850,000 - 20,050,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի 412,00 - 412,50 \$
Մէկ օնս արծաթ 5,75 - 5,77 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը:
Եւրօ 1.2455 - 1.2460
Քանադական տոլար 1.3095 - 1.3100
Ջոնիցերիական ֆրանք 1.2475 - 1.2480
Ճափնական եէն 106.95 - 107.00
Մէկ սթերլին 1.7735 - 1.7740

Մէկ փոլար 565 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ
Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում

Ա. կարգ - - -
Բ. կարգ - - -

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)
Տօնական այս օրը կապ պահեցէք հարազատներուն հետ: Երկար առեճէ ի վեր ձեր չտեսած բարեկամներուն այցելեցէք: Մի՛ մոռնաք փոքր նուէր մը տալու անոնք:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Արձակուրդի այս օրով պիտի ունենաք այցելուներ, որոնց հետ ձեր հանդիպումը պիտի ըլլայ օգտակար: Այսպիսով հանելին պիտի միանայ օգտակարին:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Վայելեցէք օրուան ստեղծած բարիքները: Տեսակցելու առիթներ պիտի ունենաք այնպիսի մարդոց հետ, որոնք արժանաւոր են եւ բարեկիրք:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Այսօր անտրամադիր էք, որովհետեւ երեկ գիշերուան կերուխումը քիչ մը յոգնեցուցած է ձեզ: Հանգըստացէք, քանի որ այսօր աշխատանքի օր չէ:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Մի՛ մոռնաք, որ Մեծուդ Է. այցելեցէք բարեկամներու, որքան ալ անտրամադիր ըլլաք երեկ գիշերուան ուշ ժամներուն անկողին մտած ըլլալու պատճառով: Յարգեցէք սոնական օրուան պահանջները:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Եթէ անյետաձգելի գործեր ունիք, գանձք կատարեցէք այսօր՝ օգտուելով արձակուրդի առիթներէն: Կրնաք ընդունիլ հիւրեր, որոնց չէք տեսած երկար առեճէ ի վեր:

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Այսօր ձեր գաւակներուն հետ եղէք, նայեցէք անոնց ժպտուն դէմքին: Մանուկներու տօնն է այս, ասոր համար ալ մի՛ մոռնաք պատրաստելու անոնց Կաղանդի նուէրը:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Ուրախ էք այսօր, մանաւանդ որ հետաւոր երկրէ հարազատ մըն ալ դիմաւորած էք եւ միանաբար կը վայելէք տօնական այս օրերը: Միշտ եղէք հիւրասէր:

ԱՂԵՂՆԱԻՌ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Տօնական օրերու հրաւերները կարծէք յոգնեցուցած են ձեզ. բայց այս յոգնութիւնը ուրախ առիթներով կատարած էք, ուրեմն շուտով կը հանգստանաք:

ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Այս օրերուն բաւական «շփացուցած» են ձեզ, ուրախացած էք, եւ այսօր շնորհակալութիւն պիտի յայտնէք ամէն անոնց, որոնք մտածած են ձեր մասին:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Նոյնիսկ ամէնէն հանդիսաւոր պահերուն կը պահէք ձեր բնական վիճակը: Ձեր այս կեցուածքը շատ պիտի գնահատուի այսօր: Օրը յարմար է հիւրեր ընդունելու:

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Հազիւ քանի մը ժամ քնացած էք այսօր, բայց շատ կանուխ արթնցած էք՝ բանալու համար ձեր ստացած նուէրներուն ծրարները: Այսօր երջանիկ էք մանուկի մը նման:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5623 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՆԱՅԵԱՏ

- Արեւելեան տխուր եղանակ - Հինտու սիրով աստուածը:
- Շառուն - Միամօր:
- Միջուկը դժուար էլ լող - Մառնուր որդ:
- Գալուստ - Կակուղ միս:
- Կնոջ ամուսնոյն քրոջ ամուսինը - Հարեւանցի կար:
- Դրկից տառեր - Մառի կոնդ - Արբուբենէն:
- Վախկոտ - Հանքատեսակ:
- Ժամանակագրութիւն - Պալթեան մայրաքաղաք:
- Ամէնէն առաջ - Յանձնէն:
- Կիրիկեան նաւահանգիստ - Սիրուն:
- Մետաղեայ առածական կազմած:
- Ոտքը բոպիկ - Լարաւոր նուագարան:
- Մեղմ հով - Յորեանբոյսի տեսակ:
- Ողորկել - Արու ալծ:
- Յուցական դերանուն - Ժխտական մասնիկ - Կրկնուած գիրք:
- Պատշաճ:
- Ստացական ածական - Փոթորիկ - Յուցական ածական:
- Ստացական դերանուն - Լիցք:
- Չափ - Իւրացոր՝ Լ - Տառի մը անունը:
- Բառերուն ծայրը աւելցուած մասնիկ - Թուղթի կտոր:
- Հայածիչ մը - Ոստքի մասերէն:
- Անձնական դերանուն - Հանճարեղ:

ԹԻՒ 5622

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՍԸ

1	Խ	Ա	Չ	Բ	Ա	Ռ	Ի	Ն	Ա	Ս
2	Օ	Ք	Ի	Կ	Ա	Ս	Ա	Գ	Ա	Տ
3	Պ	Ի	Մ	Ա	Ս	Ա	Ս	Ս	Ե	Ր
4	Ք	Մ	Ի	Մ	Ա	Ս	Ա	Ս	Ե	Ր
5	Վ	Ա	Ր	Կ	Ա	Ղ	Ե	Ի	Ն	Ա
6	Ա	Ր	Տ	Ա	Վ	Ա	Ղ	Ա	Ն	Ա
7	Կ	Ա	Ր	Ի	Ն	Ե	Ղ	Ա	Ն	Ա
8	Ա	Գ	Ա	Մ	Ա	Ս	Ա	Ղ	Ա	Ն
9	Ն	Ի	Մ	Ա	Վ	Ա	Ղ	Ա	Ն	Ա
10	Ա	Ր	Օ	Ր	Ի	Ն	Ա	Վ	Ա	Ն
11	Տ	Հ	Ր	Ա	Ց	Ա	Ն	Տ	Ն	Ա

ԱՉԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1953

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻ ՄԸ ՎԱԽՃԱՆԸ

Յրանսա վերջապէս կրցաւ ունենալ իր նախագահը, յանձնել Հաւրի վեթերան ձերբակուտական Ռընէ Գոթիի: Արտասահմանի մէջ անձամբ այս անունը անձամբօք է նսեւ Յրանսայի համար, հակառակ անոր որ անկախ խորհրդարանականը երեսուն տարուան քաղաքական ասպարէզ մը ունի:

Յրանսայի կեանքը վարող դասական կուսակցութիւնները (ընկերվարականներ, արմատականներ եւ հանրապետականներ) չկրցան համաձայնի շեշտուած քաղաքականութիւն ունեցող անձի մը շուրջ (Լանիէլ, Նեժլէն կամ Տերպոս):

Ռընէ Գոթի յաջողեցաւ հոգ, ուր ձախողած էին միւսները, եւ ընտրուեցաւ շնորհիւ արմատականներու միջեւ գոյացած երկպառակութեան: Արդարեւ, արմատականները հիմնական դեր խաղացին Յրանսայի հանրապետութեան նախագահի ընտրութեան մէջ, ինչպէս ժամանակին՝ «ժողովրդական ճակատ»-ի օրերուն, ստիպած էին, որ Միլլըրան հրժարուի: Այսօրուան տագնապը կարելի է բաղդատել միայն այդ օրերուն, այլապէս Յրանսայի հանրապետական պատմութեան մէջ կարելի չէ գտնել ստիպած սուր տագնապ մը նախագահական ընտրութեան մը առիթով:

Սահմանադրականօրէն, Յրանսայի Հանրապետութեան նախագահը մեծ իրաւասութիւններ չունի, բայցեւայնպէս, տրուած ըլլալով

Յրանսայի հանրային կեանքին անկախուց վիճակն ու նախագահական պաշտօնին կայունութիւնը, նախագահը կը դառնայ շատ աւելի կարեւոր անձանորութիւն մը, քան կը սահմանեն իրեն հիմնական օրէնքին տրամադրութիւնները: Ճիշդ ասոր համար է, որ նախագահին անձը այնքան երկարատեւ վիճաբանութիւններու ատարակալ դարձաւ:



Այսօր տակաւին, երբ նախագահը ընտրուած է Եօքը տարուան համար, կարելի է հարց տալ, թէ արմատականները ինչու՞ չէին արտայայտուեցան Լանիէլի նման անձանորութեան մը, որ այնքան անձուկրաբար ծառայած է եւ կը շարունակէ ծառայել իր երկրին: Արմատականները կ'առաջարկեն, թէ հանրապետութեան նախագահը պէտք է ի վիճակի ըլլայ կապ պահելու Յրանսայի քաղաքական գաճազան հոսանքներուն միջեւ: Լանիէլ, որ չափաւորական մըն է, չէ՛ր կրնար այդ կապը պահել: Երբ ընկերվարական Վեցսան Օրիոլ մը կրցաւ անաշտ ու անկողմնակալ նախագահ մը ըլլալ, ի՞նչ պատճառ կար, որ Լանիէլ չըլլար այդպիսին:

Ռընէ Գոթի, որ հանրապետութեան նախագահ ընտրուեցաւ շնորհիւ արմատականներու խափանարարութեան, պիտի կարենա՞յ պէտք եղած հեղինակութիւնը ունենալ իբրեւ գերագոյն իրաւարար կողմերը հասկացողութեան մը բերելու համար: Տակաւին յայտնի չէ:

ԱՅՍՕՐ՝ 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

■ 1907 - Շ. Յ. Դաշնակցութեան նախաձեռնութեամ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Ը



ՆՃՍԱՐ

«... ԴԵՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ»

Այսօր, կեսօրէ ետք ժամը 4:00ին, երբ աւարտած կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ. - Շապապ Սահէլ մրցումը (2:15ին), մեր համակիրները, որոնք Պուրճ Համուտի դաշտին մեկի յատկացուած թրիպիւնը լեցուցած պիտի ըլլան, յոտնկայս եւ հայարտօրէն պիտի երգեն, պիտի երգեն՝ նք մեր քայլերը. «... դէպի յաղթանակ»:

Անցեալ շաբաթ, Լիբանանի ֆութպոլի ախոյեանութեան 7րդ հանգրուանին (Սա-ժէսի դէմ), Հ.Մ.Ը.Մ. արձանագրեց եղանակի իր առաջին յաղթանակը: Այսուհանդերձ ան տակաւին կը մնայ դասաւորման աղիւսակին վերջին դիրքին վրայ: Այսօր, երեք կէտը, այսինքն՝ յաղթանակը ապահովաբար գէթ դիրք մը կը բարձրացնէ մեզ, իսկ եթէ պատահի, որ այս հանգրուանի մնացեալ մրցումներուն արդիւնքները «մեր ուզածին պէս ըլլան», ապա կարելի է մինչեւ իսկ «պրծիլ» վտանգաւոր գօտիէն:

Ուրեմն, այսօրուան ճակատումը մրցաշարքի մեր առաջին թրնին կ'փոխնէ: Եւ ուրեմն, աւելի քան երեք պիտի լարենք մեր ճիգերը՝ մարզիկ թէ համակիր հաւասարապէս, ամէն գնով երեք կէտ ապահովելու եւ վերջնականապէս մեր ետին ձգելու Շապապ Սահէլը, որուն յաջորդ հանգրուաններուն վստահաբար պիտի յաջորդեն առնուապէս չորս խումբեր...

Ամբոխավարութիւն չէ այս մէկը, այլ՝ հարիւր տոկոս համոզուած դատողութիւն: Ըսած ենք, կ'ըսենք դարձեալ եւ տակաւին շատ պիտի կրկնենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ կայմը թէեւ այդքան ալ նախանձելի խումբ մը չէ, սակայն անառարկելիօրէն շատ աւելի նախանձելի է քան 6 - 7 խումբեր, որոնք ամէն իմաստով մեզմէ անկայուն են: Հետեւաբար իրաւունք ունինք մեր ակնկալութիւններուն մէջ խիստ պահանջկոտ եւ ինքնավստահ ըլլալու, եւ հետեւաբար յաղթելու մեր վճռակամութիւնը ամուր է երեք՝ ամբոխավարութիւն:

Կը մնայ, որ այսօր մեր մարզիկները ամբողջ 90 վայրկեան կայքարին մրցակիցին դէմ, յաղթելու կամքով ու համոզումով դաշտ ներկայանան, պայքարին գնդակին համար, մինչ համակիրները ամբողջ այդ տեսողութեան քաջայերեն մեր տղաքը, որպէսզի միասնաբար կերտենք սպասուած յաղթանակը, որուն արժանի ենք անկասկած:

Հ. Վ.

ԶԱՆԱԶԱՆԵԱՆ ԿՊԻՋԷ ԲԱՆԱՆՑԸ ԱՆՈՅԵԱՆ ՏԵՄՆԵԼ

Բանանց Երեւանի մարզիչ Յովհաննէս Զանգանեան, որ Հայաստանի ֆութպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան 2003 տարուան աւարտին իր կազմին հետ հանդիսացաւ փոխ ախոյեան, յայտնեց, որ 2004ի ախոյեանութեան մրցումները եւս պիտի շարունակէ նոյն թափով, ամէն գնով տիրող սիրանալու համար:

Անդրադառնալով 2003ին, «Արարատ-73»ի նախկին ֆութպոլիստ՝ Զանգանեան ըսաւ, որ այս տարին ամբողջութեամբ տարբեր էր նախորդ տարիներէն, որովհետեւ խումբերուն միջեւ պայքարի ոգին բաւական զգալի էր: Ան աւելցուց, որ այդ յաջողութեան մէջ իրենց բաժինը ունեցան նաեւ իրաւաբարները, որոնք առաւելագոյն կատարեցին իրենց պաշտօնը:

Անդրադառնալով 2004ի իր ծրագիրներուն, Զանգանեան ըսաւ, որ մինչեւ նոր եղանակը սկսիլը բազմաթիւ մարզիկներ պիտի փորձէ, անոնցմէ լաւագոյնները ընտրելով:

Եզրափակելով, ան ըսաւ, որ խումբը փորձեր պիտի կատարէ Հայաստանի եւ Կիպրոսի մէջ, պատրաստուելու համար նոր եղանակին:

ՉԻՏԱՆ ԿՊԻՋԷ ԻՐ ԱՍՊԱՐԷԶԸ ԱՒԱՐՏԵԼ ՌԷԱԼ ՄԱՏՐՈՍԻՄԵՆ

Ֆրանսացի միջնապահ Չիտան Զիտան երկուսն ապանակեց «Մարքա» մարզական օրաթերթին հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին յայտարարեց, որ որոշած է ֆութպոլիստի իր ասպարէզը աւարտել, ներկայ իր ակումբին՝ Ռէալ Մատրիտի հետ:

31 տարեկան Չիտան մինչեւ 2005 պայմանագրութիւն մը ստորագրած է մայրաքաղաքի կազմին հետ:

Եզրափակելով, ան ըսաւ, որ երբ 2004ի մրցաշարքին ետք պաշտօնապէս պիտի յայտարարէ ապագայ իր ծրագիրները:



Չիտան

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

- ԱՅՍՕՐ՝ Հ.Մ.Ը.Մ. - ՇԱՊԱՊ ՍԱՀԵԼ - ՍԱՅՏԱՅԻ ՄԵՋ՝ ՆԸԺՄԷ - ԱՆՍԱՐ ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄ

Լիբանանի ֆութպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան ճրգ հանգրուանի բացման մրցումին, այսօր՝ Շաբաթ, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ կը մրցի Շապապ Սահէլի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 2:15ին:

Շարժուած գագաթի ճակատումը տեղի պիտի ունենայ այսօր երեկոյան ժամը 8:30ին, Սայտայի Քաղաքապետարանի դաշտին վրայ, ուր Նրժմէ պիտի ճակատի Անսարի դէմ:

Ստորեւ՝ ճրգ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՇԱԲԱԹ, 27 ԴԵԿՏԵՄԵՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Հ.Մ.Ը.Մ. - Շապապ Սահէլ	2:15	Պուրճ Համուտ
Անսար - Նրժմէ	8:30	Սայտա

ԿԻՐԱԿԻ, 28 ԴԵԿՏԵՄԵՐ	ԱՀՄ	ԱՀՄ
Ահտ - Սաֆա	2:15	Պուրճ Համուտ
Սաֆա - Հ.Մ.Մ.	2:15	Թրիփոլի
Սայամ - Մապարա	2:15	Պէյրուս
Օլիմփիք - Թատամոն Սուր	4:45	

ճրգ հանգրուանի մրցումներուն նախօրեակին, ընդհանուր դասակարգումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

	Թ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԺՏ
1.- Նրժմէ	6	1	0	22	5	19
2.- Ահտ	6	1	0	14	4	19
3.- Օլիմփիք	5	1	1	11	6	16
4.- Սաֆա	2	3	2	8	11	9
5.- Թատամոն	3	0	4	6	9	9
6.- Անսար	2	2	3	9	10	8
7.- Մապարա	1	4	2	11	11	7
8.- Սաֆա	2	1	4	7	12	7
9.- Հ.Մ.Մ.	2	1	4	6	13	7
10.- Սահէլ	1	3	3	7	9	6
11.- Սայամ	1	2	4	9	13	5
12.- Հ.Մ.Ը.Մ.	1	1	5	9	16	4

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

Անգլիոյ ֆութպոլի բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան 18րդ եւ երթի նախավերջին հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի ունեցան երէկ յետմիջօրէին, Մանչեսթըր Եունայթըտ ամբապնդեց պարագլուխի իր դիրքը, երբ իր դաշտին՝ «Օլտ Թրէֆորտ»ի մէջ, 3-2 արդիւնքով պարտութեան մատնեց Էվըրթընը (14րդ):

Հակառակ անոր որ Եունայթըտ այժմ մէկ կէտի առաւելութեամբ կը շարունակէ գերապանցել Արսենալը, սակայն անիկա ցարդ կրած է երեք պարտութիւն: Լոնտոնեան կայմը տակաւին կը շարունակէ մնալ ցարդ անպարտելի միակ խումբը:

Էվըրթընի դէմ տեղի ունեցած մրցումին, մարզիչ Ալեքս Ֆերկլըսընի կազմին կոլերը նշանակեցին Նիքի Պար (9րդ), Բլեյլըսըն (44րդ) եւ Տէյվիտ Պելլըն (68րդ), իսկ Էվըրթընի կոլերը՝ Կերի Նելիլ (13րդ) սխալմամբ իր բերդէն ներս) եւ Տանքըն Ֆերկլըսըն (84րդ):

Մնալու համար պարագլուխի դիրքին վրայ, վաղը՝ Կիրակի, Մանչեսթըր պէտք է որ յաղթանակ վերադառնայ Միտլըրլայփոլի դաշտէն, երթի մրցումները պարագլուխի դիրքին վրայ աւարտելու համար:

Արսենալ 3-0 արդիւնքով պարտութեան մատնել էտք վերջին դիրքը գրաւող Վուլվըր, բարձրացաւ 2րդ դիրք, վստահաբար օգտուել է ետք Չելսիի կրած պարտութեանէն: Այս վերջինը կրեց եղանակի իր երրորդ պարտութիւնը Չարլթընի դաշտին վրայ (5րդ) տեղի ունեցած մրցումին (4-2): Չարլթընի կոլերը նշանակեցին Հերմըն Հրէյտարըն (առաջին վայրկեանին), Մէթ Հոլլընտ (35րդ), Եոնայթըն Եոհանսըն (48րդ) եւ Ճէյսըն Էուլ (53րդ): Չելսիի կոլերը նշանակեցին Ճոն Թերի (10րդ) եւ Էյտիւր Կուտիոնսըն (73րդ):

Իսկ «Հայվերթի»ի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին Արսենալի երեք անպարտաւստան կոլերը նշանակեցին Ճոնի Քրէյտը (13րդ) սխալմամբ իր բերդէն ներս) եւ Թիերի Հանրի (20րդ եւ 89րդ):

Ստորեւ՝ 18րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Արսենալ - Վուլվը	3-0
Պիւնիկի - Մանչեսթըր Սիթի	2-1
Պլէքսըրն - Միտլըրլայփոլ	2-2
Չարլթըն - Չելսի	4-2
Ֆուլհեմ - Ստուրթհէմքըն	2-0
Լիօ - Ասթոն Վիլա	0-0
Լայպըր Սիթի - Նիքթաւրլ	1-1
Լիվըրփոլ - Պիլթըն	3-1
Մանչեսթըր Եունայթըտ - Էվըրթըն	3-2
Փորթսմութ - Թորքենհամ	2-0

Ստորեւ՝ 19րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուսի ժամով):

ՎՍԳԸ	ԺԱՄ
Չելսի - Փորթսմութ	14:30
Նիքթաւրլ - Պլէքսըրն	16:00
Ասթոն Վիլա - Ֆուլհեմ	17:00

Պիլթըն - Լայպըր Սիթի	17:00
Էվըրթըն - Պիւնիկի	17:00
Մանչեսթըր Սիթի - Լիվըրփոլ	17:00
Թորքենհամ - Չարլթըն	17:00

Վուլվը - Լիօ	17:00
Միտլըրլայփոլ - Մանչ. Եունայթըտ	18:00

18րդ հանգրուանի մրցումներու աւարտին եւ 19րդ հանգրուանի մրցումներուն նախօրեակին, այժմ ընդհանուր դասակարգումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

	ԿԺՏ
1.- Մանչեսթըր Եունայթըտ	43 (37-13)
2.- Արսենալ	42 (34-12)
3.- Չելսի	39 (33-16)
4.- Ֆուլհեմ	28 (30-23)
5.- Չարլթըն	27 (26-22)
6.- Նիքթաւրլ	26 (26-21)
7.- Ստուրթհէմքըն	26 (18-14)
8.- Պիւնիկի	26 (16-19)
9.- Լիվըրփոլ	25 (26-19)
10.- Պիլթըն	22 (18-16)
11.- Միտլըրլայփոլ	21 (14-17)
12.- Ասթոն Վիլա	21 (16-23)
13.- Մանչեսթըր Սիթի	20 (25-25)
14.- Էվըրթըն	20 (22-25)
15.- Փորթսմութ	19 (20-25)
16.- Պլէքսըրն	18 (25-29)
17.- Թորքենհամ	18 (19-28)
18.- Լայպըր Սիթի	17 (26-29)
19.- Լիօ	17 (17-37)
20.- Վուլվը	11 (13-38)

ՍՊՈՐՏԻՎ

Սկովտիոյ ֆութպոլի ախոյեանութեան 18րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Սելթիք, որ ցարդ անպարտելի միակ խումբն է, այսօր իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Հիպերնիքը (8րդ):

Մարչի Մարթին Օնիլի կազմը՝ Սելթիք, այժմ ութ կէտի առաւելութիւն մը ունի իր «Ռիբիւն» մրցակիցին՝ Ռէյնօրփի վրայ, որ վաղը դժուար մրցում մը ունի կատարելիք Տանտիի դաշտին վրայ (9րդ):

Ռէյնօրփ իր ամէն կարելին պիտի ընէ ամէն գնով յաղթանակ վերադառնալու «Տէյն Փարք», աւելիով հեռու չմնալու համար Սելթիքին: Նշենք, թէ Ռէյնօրփ ցարդ կրած է երկու պարտութիւն:

Ստորեւ՝ 18րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուսի ժամով):

ՎՍՍՐ	ԺԱՄ
Հարթ - Մատրրուէլ	14:30
Սելթիք - Հիպերնիք	17:00
Քիլմառնոք - Տանտի Եունայթըտ	17:00
Լիվինկսթըն - Ապըրտին	17:00
Փարթիք - Տանֆրիմայն	17:00

ՎՍԳԸ

Տանտի - Ռէյնօրփ	17:00
-----------------	-------

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէան, երէկ, նախարարութեան իր կեդրոնատեղիին մէջ ընդունեց Լիբանանի ծանրաբարձութեան ֆետերասիոնի նախագահ Մալիք Ալիուանը, որուն կ'ընկերակցէր քարտուղար Մոհամէտ Ռըսթոմ Քասի:

Հանդիպումին ընթացքին գլխաւորաբար արծարծուեցաւ ֆետերասիոնի հարկ եղած նիւթական օժանդակութիւնները տրամադրելու կարելիութիւնները, որպէսզի այդ մարզին մէջ անիկա լաւ արդիւնքներ արձանագրէ:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԶ ԿՐԵՅ ԵՂԱՆԱԿԻ ԻՐ 7ՐԴ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ԷՆ. ՊԻ. Էյ.ի երէկ-Լուս Անձելըս Լէյքըրը կրեց եղանակի իր եօթներորդ պարտութիւնը, երբ իր դաշտին վրայ պարտուեցաւ Հիուսթըն Ռոքեթսէյն՝ 99 - 87: Նշենք, որ այս եղանակին Լէյքըրը երկրորդ անգամ ըլլալով կը պարտուէր իր դաշտին վրայ:

Հակառակ անոր որ Քոպէ Պրայընթ նշանակեց 23 կէտ, իսկ անոր խմբակից Շաքիլ Օնիլ՝ 22 կէտ եւ 10 ռիպուստ, սակայն Ռոքեթսէյնը իր հիւրին հաղթեց 22 կէտ, 9 ռիպուստ եւ 7 էսիւս, իսկ անոր խմբակից Եսօ Միլիկ՝ 18 կէտ եւ 8 ռիպուստ:

Սաքրամենթոյի մէջ, Քինկոյ 111 - 103 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրին՝ Տալասա Մալրիքսէն: Մալրիքսի արձանագրած այս յաղթանակին մէջ իր մեծ բաժինը ունեցան Տրըք Նովիթթըն եւ Անթուան Ռոքըրը: Առաջինը նշանակեց 31 կէտ եւ 14 ռիպուստ, իսկ երկրորդը՝ 23 կէտ, 12 ռիպուստ եւ 8 էսիւս:

Վերջապէս երէկ տեղի ունեցած երրորդ եւ վերջին մրցումը, որ

տեղի ունեցաւ Օրլանսո Սթէյթի եւ Քիլվիլէնտ Քաւալիքի միջեւ, վերջ գտաւ առաջինին յաղթանակով՝ 113 - 101 (յետ երկարաձգման ընթացքին):

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը:

ԱՅՍՕՐ

Մայնի Հիթ - Ուաշինկթըն Ուիլլըքսոն
Շիքաօ Պուլկ - Քիլվիլէնտ Քաւալիք
Արլանսա Հոքս - Նիւ Օրլինս

Նիւ Ճըրպի Նէթ - Տիթթոնիք Փիթթըն
Նիւ Եորք Նիքս - Մենֆիս Կրիվիլ
Ինտիանա Փէյլըր
Միչիգան Պաքս
Օրլանսո Սթէյթ - Սան Անթոնիո Սփրի
Հիուսթըն Ռոքեթս - Տեննիսի Կլիքս
Թորոնթօ Ռեփթըր
Ետրա Ճէյ

Պոսթըն Սելթիքս - Ճէօնիքս Սանկ
Ֆիլադելֆիա Սիքս - Լոս Անձելըս
Քիլվիլէնտ
Սաքրամենթո
Քինկոյ - Կոլորադօ Սթրի
Ուորթըն
Միչիգան Վուլվը - Փորթլէնտ Թրէյլ Պլէյ-վըր

ՎՍԳԸ

Տիթթոնիք Փիթթըն - Արլանսա Հոքս
Նիւ Եորք Նիքս - Մայնի Հիթ
Նիւ Ճըրպի Նէթ - Ինտիանա Փէյլըր
Ուաշինկթըն Ուիլլըքսոն - Շիքաօ Պուլկ
Մենֆիս Կրիվիլ -

ԻՍՐԱԵԼ ԿԸ ՔՆՆԱՐԿԵ ԹԵԼ ԱՄԻԻԻ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՀԱԿԱԴԱՐՁԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ...

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԸՆԿԵՐԱԿԻՑԸ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻՆ

«ԱԶԴԱԿ»Ի 2004Ի ԱՄԱՆՈՐԻ ԲԱՅԱՌԻԿԸ

Բացառիկը կ'ընդգրկե ազգային-քաղաքական, մշակութային և այլազան հիթերով 15 գլոբալներ, որոնց կ'աշխատակցին 40 յորտաժազիրներ Լիբանանի և Արարատի մասերում:

Սպորտի բացառիկին բովանդակություններ:

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

Տեղեկատվական հասարակությունն ու հայ մամուլը

ՈՂՁՈՅՆԻ ԽՕՍՔԵՐ

Ժամանակին հեղ, բայց ոչ ի գին արժեքներուն Գեղամ եպ. Խաչերեան

Ժամանակը որ կ'անցնի հաշի կը պահանջե... Վարդան եպ. Ազգարեան

Իսկապես նոր Վեր. Գոկոս. Փոլ Հայտնոսեան

ՀԱՅԱՍՏԱՆ

Անկի լաւ ապագայ մը կ'երթնայ ճամբուն վրայ Ժաք Յակոբեան

ՀԱՅԻՆԻ ՉՄԻՍԻՔ

Ի՞նչպիսի Չախար մը ապագայ վրաստանի մէջ Վ. Ասգեան

Պիտրի չէ դրախտի ոգի Շողիկ Աշրգեան
Չախարի փարիս Լ. Ա.
Փարսանա ԅ. Թումանեան

ՀԱՅ ԴԱՏԻ ՏԱՐԻՆ

Ամերիկեան յիշողութիւնը վերագրելու ատարկութեամբ Խաչիկ Մորաթեան

Հայ-թրքական յարաբերութիւններու արագընթաց ճանաչման փարիս Հուրի Մայիսեան

ԱԶԳԱՅԻՆ - ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Հ. Յ. Գաշնակցութեան Լիբանանի անցնող փարիս «Ազդակ»ի փարիս

Լիբանանահայ ազգային կեանքը 2003ին Լիբանանահայ հայրենակցական միութիւնները այսօր Կահանդրեան

1929-2004 Մարտի Հայրենակցական Միութեան հիմնադրութեան 75ամեակ Ս. Պ.
2003ի կորուստները

ԻՐԱԲԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆ

Իրաբանայութիւնը և Իրաքի պարեկազմը Պարոյր Յակոբեան

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՏԱՐԻՆ

2003ի Լիբանանը իր ատորհայով և փազնակներով Ն. Բարսեղեան

Լիբանան - Հայաստան 2003ի յարաբերութիւնները

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՅԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Իրաքի փազնակները ընթացքը հայելի նոր աշխարհի զարգացումներուն Ս. Մանուկեան

Իրաք ամերիկացիներու քառսի մարտում Հ. Գեորգեան
Ժամանակագրութիւնը իրաքեան պարեկազմի Բաղդադ S. Քիսայեկեան

Խաղաղութեան նոր նախաձեռնութիւններ Թ. Օրտոդեան

ԱԶԳԱՅԻՆ ԲԵՄ

Դարչնայ հայ - թրքական յարաբերութիւններու մասին Հրայր Վարժապետեան

Մշակութային ինքնութիւնները փոխելի խարխափումներ վեր 3. Պալեան

Համաշխարհային նոր համակարգը և Թորթիսան 3. Թալապեան

Հայ ժողովուրդի ազգային պահանջարկները այսօր Մելիք Գարագառեան

«Գաղղնիստիւն պահելու խափի պահանջին փակ...» Գոկոս. Մովսէս Լեւոնեան

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Լենինականի փոստատար Գեղամի Երեմեան

Ընծարանականի յուշեր իբրև աշակերտ և մանկավարժ Ա. Գազանեան

Ծառայութեան շուրջակայքի երեսները Սեդա Մարկոսեան - Խտրեան

Հայ ժողովուրդի անկեղծ բարեկամութիւնը Իլիկ Յրապան

Կիլիկիական հիմնարկութեան յիմնամաս յոբելեանը Համո Պետրոսեան

Տեղեկագիր Կաղանդ Պապային Ասպետ Մանգիկեան

Ամառ մը Մ...ի դռներուն Սիրուն Սիսեան - Հանքեան

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

Ճակագիր գուգահեռ Աղասի Մյվազեանի և Հրանդ Մարտիանի Գ. Շահինեան

Մարտիանի փոփոխութիւնը Սեդա Մարկոսեան

Հայ եկեղեցւոյ ծխական երգերու հարազատութեան հարցը Եղորտը Թորթիկեան

ԿՆՈՋԱԿԱՆ

Կաղանդը Չախարի մէջ Պատրաստեց Շուրիկ Մախազապեան

Տոնական օրերուն ի՞նչպէս պահել բնական ծանրութիւնը Փորչաժ և Քարա Եսարոյեան

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

Անցրպեպի գաղղնիստիւնը Մարդկային ուղեղը և հինգ զգայարանները

Փորչաժ և Քարա Եսարոյեան

Քաթիկոս պատրաստեց Շողիկ Տեր Դուկասեան

ՄԱՐՁԱԿԱՆ

Հ. Ա. Գ. Միութեան 2003ի յարաբերութիւնները Երոպայի ֆուրբոյի ազգային խումբերու

13րդ ախոյանութիւնը Փորթոգալի մէջ Նարինե Պուլղոյեան

Հ. Ա. Գ. Միութեան փարտան յարաբերութիւնները Հայրենի մարզական կեանքի իրագործումները

2003ի մարզական միջազգային փարիս Պատրաստեց Վ. Գազապեան

ԺԱՄԱՆԻՅ

Իտալացի, Տարախոյժ Խաչբառ, Շրջում Տոմիկո Պատրաստեց Ս. Մ. Ազգարեան

232 էջ: Մակ 5000 լ.ո.: Մարտի 10 համար դիմել «Ազդակ»ի ցրտիչներուն:



Իսրայէլացի բարձրաստիճանի զինուորականները հանդիպում մը ունեցան երէկ քննարկելու համար Թէլ Աւիւի անձնասպանական գործողութեան հակադարձելու միջոցները: Մինչ այդ, Իսրայէլական ժիհատի հապարատը հետեւորդներ Կապալի մէջ կը մասնակցեին իսրայէլեան ուժերուն կողմէ սպաննուած ղեկավարի մը յուղարկութեան՝ երդուելով լուծել անոր վրէժը:

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Շաուր Մոֆապ երէկ հանդիպում ունեցաւ բարձրաստիճանի զինուորականներուն և Շին Պէթի պատասխանատուներու հետ Թէլ Աւիւի մէջ, ուր Հինգ-շաբթի երեկոյեան տեղի ունեցած էր անձնասպանական գործողութիւնը, որ խլած էր երեք զոհ, ինչպէս նաեւ գործողութիւնը կատարող զինուոր, որ ԷՖ. ՓԷ. ԷԼ. ՓԷ.ի անդամ էր: Երեք ամիսէ ի վեր իսրայէլեան քա-

կան կը դարձնէ Իսրայէլի կողմէ միակողմանի միջոցառումներ որոնք գործողութեամբ կ'աւարտի համեմատաբար խաղաղ նկատուած անհետ կերպ ծանակամիջոցը Սեպտեմբեր 2000ի ինթիֆադայէն ի վեր:

տրութիւնը տեղի ունեցաւ երէկ Կապալի ժապալիս գաղթականներին մէջ: Անոր մասնակցեցան Իսրայէլական ժիհատի աւելի քան քսան հապարտեւորդներ, որոնք «վրէժ, վրէժ» կ'աղաղակէին:

Պաղեստինցի վարչապետ Ահմէտ Քուրէյ ղատապարտեց Կապալի դէմ յարձակումն ու Թէլ Աւիւի անձնասպանական գործողութիւնը: Կառավարութեան բանբերը ըսաւ, որ վարչապետը կը դատապարտէ յարձակումները, որոնք թիրախ կը դարձնեն քաղաքայինները: Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ և պաղեստինեան խորհրդարանը նաեւ դատապարտեցին երկու գործողութիւնները:

ՄԻԱՅԵՍԸ ՆԱՀԱՆԵՐՈՒՄ արտաքին գործոց նախարար Քուրիս Փաուրը դատապարտեց Թէլ Աւիւի գործողութիւնը, կոչ ուղղելով պաղեստինեան իշխանութեան սանձելու ահաբեկչական կազմակերպութիւնները: Քանի մը ժամ առաջ հրապարակուած յայտարարութեամբ մը, Փաուրը կոչ ուղղած էր Իսրայէլի հրաժարելու միակողմանի միջոցառումներու ծրագրէն:

(ԱՅՓ)

ՓԱՐԻՉԻՆ ԵՏՔ ՎԻԵՆՆԱ ԿԸ ԴԱԴՐԵՑՆԵ ԴԵՊԻ ՄԻԱՅԵՍԸ ՆԱՀԱՆԵՐՈՒ ԹՈՒՉՔՆԵՐԸ

Միացեալ Նահանգներ այն պատիւն էրբ յայտարարեցին ապահովական իմաստով խիստ միջոցառումներ՝ Նոր Տարուան ստիճով, մասնաւորապէս կողմնակցելու ահաբեկչական հաւանական նոր արարքներէ, ֆրանսական օդանավային ընկերութիւնը դադարեցուց ղէպի Միացեալ Նահանգներ իր թռիչքները: Երէկ, «Էր Տրանս»ի քայլին հետեւեցաւ ամերիկական օդանավային ընկերութիւնը, մասնաւորապէս որ ճամբորդ մը իբրեւ կասկածելի կասեցուցեցաւ Վիեննայի մէջ, սակայն 6 ժամ ետք ապատարձակեցաւ և ուղղուեցաւ Նիւ Եորք:

ԽՆԵՆԹ ԿՈՎԵՐԸ ԿԸ ՀԱՐՈՒԱԾԵՆ ՄԻԱՅԵՍԸ ՆԱՀԱՆԵՐՈՒ

Ֆրանսայէն, Գերմանիայէն, Բրիտանիայէն և Քանադայէն ետք՝ Միացեալ Նահանգներ կը տանան հարուածը խենթ կովերուն, որոնց առաջին պարագաները յայտնուեցան երկու օր առաջ, Ուաշինկթըն նահանգին մէջ:

Ո՞Ր ԵՆ ՏՆԵՑԻՆԵՐԸ... ԷՉ 4

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը կը հաղորդէ, որ միջոցառումներ են եղանակը հասնի վրաստանի պետական նախարար և ընդդիմադիր ճակատի ղեկավար Էտեակի անդամ Չուրաք Ժվանիս: Վրաստանի կառավարութեան ղեկավարը հանդիպումներ պիտի ունենայ Հայաստանի ղեկավարութեան հետ:

ԱՇԽԱՐՀ ԿԸ ՑԱՆԱԿՅԻ ԵՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԸ ՓՈՒԹԱՅ ԻՐԱՆԻ

Իրանը հարուածած ահաւոր երկրաշարժին ի տես և ի յուր, աշխարհը ամբողջ՝ Արեւելքէն մինչև Արեւմուտք անմիջապէս օգնութեան սկսաւ փութալ Թեհրանի, իսկ բազմաթիւ ղեկավարներ, որոնց շարքին՝ Ճորձ Պուշ, Թոմի Պլէր, Ժաք Երաք, Վլատիմիր Փուրիս, Կերիարտ Շրէտտըր, Հիւսիս Մուպարաք և ուրիշներ ցաւակցութիւն յայտնեցին և խոստացան օժանդակել Թեհրանի:

Ամէնէն աւելի արագ շարժողները եղան Ծոցի երկիրները: Մէուտական Արաբիոյ Ֆահտ թագաւորը և Գահաժառանգ Ապտալիա իշխանը հրահանգեցին իրենց կառավարութեան՝ ամէն իմաստով օժանդակութեան հասնիլ աղէտեալ գօտիին:

Քուէյթ, Արաբական Միացեալ Էմիրութիւններ և Նոյն տրամադրութիւնը ցուցաբերեցին, մինչև միջազգային կարմիր խաչն ու ՄԱԿը շուրջ 500 միլիոն տոլար արժողութեամբ դեղորայք և անհրաժեշտ պէտքեր պիտի ուղարկեն Իրան, իսկ Եւրոպական Միութիւնը՝ 800 միլիոն եւրո:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԱՐԱ.- Աւելի քան հինգ զոհեր արձանագրուեցան և տասնեակ մը ուրիշներ կորուսուած կը նկատուին Թուրքիոյ հարաւային շրջանները հարուածած ուժգին փոթորիկին պատճառով, յայտնեցին պաշտօնատարները:

Ջրօսաշրջութեան կարելոյ կեդրոններէն նկատուող Անթալիոյ շրջանը երեք օրէ ի վեր թիրախ է անսխալընթաց ուժգնութեամբ փոթորիկի մը և տեղատարափ անձրևներու, որոնք ողողումներ պատճառած են ու կամուրջներ փլած: Փրկարար խմբակներ փութացած են շրջանը՝ օժանդակելու համար բնակչութեան, որ երեք օրէ ի վեր զրկուած է նաեւ էլեկտրական հոսանքէ:

ՉՈՆԿԻՆԿ.- Փրկարար խմբակներ Ուրբաթ օր շարունակեցին իրենց ճիգերը՝ հակակշիռի տակ առնելու համար կազի «Գիտուտ» մը, որ 191 զոհ պատճառած էր: Չուստանկարէի կազի հանքին մէջ տեղի ունեցած պայթուածին զոհերը մօտակալ շրջաններու բնակիչներ են: Չոհերուն կարգին են 39 մանուկները: Չոհերուն մեծ մասը չէ յաղողած փախուտ տալ արագ տարածուող թուճակը կազերէն, որոնք արգելափակած են նաեւ մուտքը փրկարար խմբակներուն:

ԼՈՆՏՈՆ, 26 (ԱՅՓ).- Դէպի կարմիր մոլորակ ուղարկուած երոպական «Պիկը 2» ցարդ չէ յաջողած կապ հաստատել երկրի հետ՝ յուսախաբ ընելով ծրագրի յատասխանատուները:

«Պիկը 2» Հրատ պետք է էջք կատարա ըլլար Հինգշաբթի առաւօտեան: Անոր պարտականութիւնն է նոր տեղեկութիւններ բերել Հրատի մասին: Երոպական մարդամեքենային կը սպասուի Հրատ հասած ըլլալու նշան մը, որ սակայն տակաւին չէ յտուած:

ԴԻՄԱՌՈՐԵՆՔ ՆՈՐ ՏԱՐԻՆ

«ԱՐԲԱԼԵԱՆ - Ե. Մ. Ը. Մ.» ՄԱՐԶԱՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԸԱՄԱԼԻՐԻՆ ՄԵՋ ԿԵՐԳԵՆ ԸՐԱՉ ԿԱՅԵԱԿԵԱՆ BIG JACK ՃԱԲԷ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Մասնակցութեամբ՝ Saxophonist MARIOԻ Ընկերակցութեամբ՝ ՍԵՂՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ և իր նուագախումբին

- ՀԱՅԱԿԱՆ ՏՈՇՄԻԿ ԵՒ ԽԱՆԴԱԿԱՌ ՄԹՆՈՒՈՐՏ
- ՀԱՄԱՂԱՍ ԵՒ ԲԱՋԱՍԵՍԱԿ ՃԱԾԵՐ
- ՀԱՃԵԼԻ ԱՆԱԿԱԿԱԼՆԵՐ

ՏԵՂԵՐԸ ԱՊԱՇՏՈՒՄԸ ԸԱՄԱՐ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ 03-351353 և 04-722902/3